

Հ. Յ. Գ.  
ՄԱՍԼՈՅ ԴԻՐԱՆ

# ԴՐՈՇԱԿ

«ՀԱՅ ՅԵՂԱՓՈԽԱԿԱՆ ԴԱՂՆԱԿՅՈՒԹԵԱՆ» ՕՐԳԱՆ

1903

„Droschak“  
ORGANE  
de la Fédération  
Révolut. Arménienne.

# ԴՐՈՇԱԿ

Adresse: 43, rue de la République  
REDACTION DU JOURNAL  
„Droschak“  
GENÈVE (Suisse)

## „ՀԱՅ ՅԵՂԱՓՈԽԱԿԱՆ ԴԱՂՆԱԿՑՈՒԹԵԱՆ“ ՕՐԳԱՆ

### Դ Ա Ր Ե Ր Ի Խ Ա Բ Ը

Մակեդոնիան կամ Հայաստանը այլևս քաղաքական թոթոզ վախօսներ չեն, որոնց կարելի է յուսադրել, քնացնել և խաբել պսպղուն ծրագրերնեով և թմրեցնող խոստումներով, այնքան առատ և այնքան սովորական ձեր քաղաքագիտութեան ժամանակագրութեան մէջ, ո՛վ նենգամիտ ներկայացուցիչներ եւրոպական դիպլոմատիայի և կամ վարագուրած բարեկամներ սուլութանական ըէժիմի...

Դարերի պատմութիւն կայ մեր յետևը:

Այդ պատմութիւնն էր — անկաշառ և անխարտախ բարեացակամ մարդկային քննադատութեան — որ Հայկական ու մակեդոնական ուղղիկների ականջին շնչաց դարերի ճշմարտութիւնը, դրոշմ նրանց դրստել կորացած մէջքը, զէնք վերցնել և իրենց փրկութիւնը թշնամու անկման մէջ որոնել...

Սուլթանական իշխանութիւնը առասպելական օձի մարմնացումն է. նրան խելքի բերելու համար գրոզ էարժէ ոչ համայն ազգերի աղերսանքը և ոչ մարդկային ամբողջ խոհականութիւնը: Նրա թոյնից ազատ լինելու համար մի միջոց միայն կայ — ջախջախել նրա գլուխը, խառնել նրա արիւնը զոհերի արեան...

Պատմութեան դասը երէկանից չէ սկսած: Դարեր ունի նա իբրև պատանդան: Տասնութերորդ դարու վերջերից, երբ յունական ստրուկ կղզիների վրայ հնչեց ապստամբութեան առաջին կոչը, մինչև ներկայ ըրպէն, քսաներորդ դարու շէմքը, ուր ամէն ինչ արիւնոտ է և դիածածկ, սուլթանական տիրապետութեան պատմութիւնը եղել է և է մի տեական, անընդհատ խաբ, քաղաքական անօրինակ ստախօսութիւն, սանձարձակ, ինչպէս մօնղոլական եսթաղանը, և աշխարայ, ինչպէս ցերեկայ լոյսը:

Փաստերը բազմաթիւ են:

Դեռ 1815-ին, ուրեմն սրանից մօտ մի դար առաջ, երբ յունական սարսափները՝ յարուցին Եւրոպայում «Թիւրքիայի քրիստոնեաներին պետութիւնների հովանու տակ առնելու խնդիրը», Սուլթան Մահմուտ (1808-1839) մտքերը խաղաղացնելու, ուրիշ խօսքով՝ Եւրոպան խաբելու համար, շլացուցիչ աղմուկով հրատարակեց իր ադէնտեր,

որոնք աւետում էին համայն աշխարհին իր «բարձր կամքը» բարելաւելու թրքահայատակ քրիստոնեաների վիճակը՝ նորագոյն ըէֆօրմներով...

Արդիւնքը. — 50 հազար քրիստոնեաների կոտորածը քիսուում՝ 1822-ին. յոյների ջարդը և Պոլսում՝ Ջատկի կարմիր տօներին. քրիստոնեաների կոտորածը Թեսալիայում և Մակեդոնիայում...

Ահա Մահմուտի ըէֆօրմները...

1839 թւին սուլթան Աբդուլ-Մէլիք (1839-1861), որի աչքերի առջևից անկասկած չէր անհետանում 1827-ի նաւարինը՝ իր հոգեւոր ուրաւականով, և որը յունական անկախութեան մէջ նկատեց եւրոպական զինւած միջամտութեան մի վտանգաւոր նախանշանը, հետեւելով դարևոր խաբէութեան շաղկին՝ հրապարակ նետեց իսթաուլ-շերիֆը, որ աւետում էր.

«Այս օրէնքը վերաբերում է մեր բոլոր հպատակներին, առանց խտրութեան դասակարգի ու դաւանութեան: Մենք շնորհում ենք, համաձայն աստուածային օրէնքների, մեր բոլոր հպատակներին անխտիր կատարելապաշտութիւն կեանքի, պատիւ և դոյքի»:

Նոյն սուլթանը, 1854-ին, երբ Անգլիան, Ֆրանսիան և Աւստրիան պահանջեցին «քրիստոնեաների վերաբերեալ կրօնական և քաղաքական օրէնքների գործադրութիւնը», հրատարակեց մի նոր հրովարտակ — խաբելու դիտումով, իհարկէ — որով նա շնորհում էր քրիստոնեաներին «իրաւունք վկայելու» և «արտօնութիւն մասնակցելու մէջլիսներին»:

Երկու տարի միայն անցած, 1856-ին, — Պարիզի կօնգրէսի տարին — Աբդուլ Մէլիք այդ կօնգրէսի սպառնական ճնշման տակ՝ շարագրեց հռչակաւոր իսթաուլ-շերիֆում, որ իր մեծագործ բովանդակութեան շնորհիւ ճանաչեց դիպլոմատական աշխարհում իբրև «բարձր արժէք» ունեցող օրէնսդրութիւն: Նա աւետում էր՝ ա) Հաւասարութիւն բոլորի օրէնքի առաջ, բ) ազատութիւն դաւանութեան, արգելելով միաժամանակ ստիպողական կրօնափոխութիւնը, գ) Հաւասարութիւն տուրքի, դ) Հաւասար իրաւունք վկայութիւն տալու և լն, և լն...

«Մեր խոստացած ապահովութիւնը — ասում էր սուլթանը — յօգուտ պետութեան բոլոր հպատակներին՝ առանց խտրութեան դասակարգի եւ դաւանութեան — դրւած են այսօր հաստատ հիմքերի վրայ և անմիջապէս իրական միջոցներ պիտի ձևւոր առնեն, որպէս զի գործադրելն լիակատար ձեւով եւ ամբողջութեամբ»:

Արդիւնքը. — Սիրիայի կոտորածը 1840-ին. հայերի և

նեստորականների ջարդը 1859-ին. մարտնետների և սիրիացիների կոտորածը Լիբանանում և Գամակոսում 1860-ին:

Ահա Աբգիւլ Մէջիդի ընթացիկները...

Հասան Աբգիւլ Համիդի օրերը:

1876-ին, իր գահակալութեան թուականին, երբ յռուբարական սոսկումները, խառնած 15 հազար զոհերի աղետարար զորքերին, ցասում և դող պատճառեցին ամբողջ մարդկութեան, Աբգիւլ Համիդ՝ այս անգամ ևս եւրոպական միջամտութիւնից փախուստ տալու նպատակով՝ անսովոր թմբկահարութեամբ և ցոյցերով հրատարակեց նշանաւոր Ս ա Տ մ ա ն ա դ ր ու թ ի լ է ն ը, որը յընդմիջտ պիտի հաստատէր պատուութիւն, արդարութիւն և հաւասարութիւն օսմանեան կայսրութեան մէջ:

Երկու տարի անցած, երբ Սան-Ստեֆանոս քուն չէր տալիս Եւրոպի կալանաւորին, նա գրկաբաց ընդունեց Բերլինի դաշնագրի 23 և 61-րդ յօդուածները, մակերօժանկան և հայկական ընթացիկների այդ միջազգային պարտաւորութիւնը: 1884-ին, երբ դեսպանները ուշադրութիւն հրահրեցին յայկական նահանգների ծանր վիճակի՝ վրայ, սուլթանը նոր և հանդիսաւոր խոստումներ արեց: Իսկ 1894-95 թուականներին, երբ Սասունի կոտորածը դէպի Տալուրիկի լեռները տարաւ երեք պետութիւնների ներկայացուցիչներին, երբ հայոց հարցը դարձաւ օրայ խնդիր, Աբգիւլ Համիդ ընդունեց Մայիսեան ընթացիկների ծրագիրը և իբրև անմիջական իրագործում, մեծ շուքով, ամբողջ դիպլոմատիական աշխարհի խնդակցութեամբ ուղեկցած՝ ճամբայ դրեց դէպի Հայաստան մարեշալ Շաքիր փաշային, իրագործելու ընթացիկները: Եւ նա իրագործեց...

Արդիւնքը. — Սահմանադրութեան ոչնչացումն վեց ամսից յետոյ. ջարդ Բուլբարիայում. ջարդ Ռուսելիայում. համիտականների զինումն. բռնի կրօնափոխութիւն, և իբրև լրացումն՝ հայկական մեծ կոտորածը, Տրապիզոն, Էրզրում, Ղան, Ուրֆա, Սիվաս, և Պոլիս, արեան գետեր, 300 հազար դիակներ...

Ահա Աբգիւլ Համիդի ընթացիկները...

Գարևոր խաբին զոհ գնաց և Մակեդոնիան, հայկական դժբախտութիւնների ընկերակիցը: 23-րդ յօդուածի ստեղծումից աւելի քան 23 տարի անցաւ: Տարիներ սպասողական, լի արտասուքով և արեամբ: Սակայն իրականութիւնը մնաց անշարժ, անփոփոխ, ինչպէս ինքը Բալկանը: Եւ երբ յբաժակը լեցեց, երբ արթնացող ժողովուրդի ազատագրական կոչը ցնցեց ամբողջ եւրոպան, ազատութեան փոխարէն նրան տրեցին թղթի մի կտոր, ընթացիկների ծրագիր անունով, դարբնած դիպլոմատիական այն հնոցում — Ռուսաստան և Աւստրիա — որոնք Բալկանի պատմութեան մէջ պիտի համարուին ամենակեղծը և ամենամաքախոսները, արտատաւորած Մեծ-Մարդասպանի հաւանութեամբ, որ այնքան հեշտ

կերպով բղխեց նրա պիղծ շթունքներից, իբրև նորագոյն ապացոյց, որ այդ ծրագիրը պարտաւորութիւն չէ, այլ ունայն խօսք, փոշի, քնադեղ...

Ղահանաւորած պատմութեան անողոք դասերով՝ Մակեդոնիան չհաւատաց: Կուր թնդիւնը, ընդհակառակը, դարձաւ աւելի հրամայական, աւելի սպառնալից: Եւ երբ Ղիեննայի մարտը միամտաբար թէ չարամտութեամբ հարցրեց՝ յի՞թէ մակեդոնական կոմիտէները այժմ էլ վայր չպիտի դնեն զէնքը, երբ ծրագրւած են ընթացիկները, ապտամբութեան քաջարի պարագլուխներից մէկը — Սարաֆով — պատասխանեց.

«Վայր դնել զէնքը՝ կը նշանակէր դաւաճանել մեր կրկրին: Մենք այլևս չենք հաւատում դիպլոմատիական ոչ մի խոստման: Հայկական ընթացիկների պատմութիւնը դեռ շատ թարմ է մեր յիշողութեան մէջ: Եւ մենք չենք դադարի կուսել, մինչև որ եւրոպան չի միջամտի զէնքը ձեռքին, մինչև չի նստասուրի եւրոպական կօնտրոլ»:

Եւրոպական կօնտրոլ — հմայիչ են այդ խօսքերը օսմանեան կայսրութեան անկիւններում, սակայն ոչ իբրև արտայայտութիւն դէպի արևմտեան դիպլոմատիան տաճած հաւատին ու յոյսերին, այլ իբրև անուղակի նշան սուլթանական ընթացիկ անկման, իբրև վախճան դարևոր այն ստրկութեան, որ կապւած է արտասուքի, արեան, աղքատութեան ու անշարժութեան ընթացիկ հետ:

Մօտիկ է այդ վախճանը: Դա կուր Մակեդոնիայի յոյսն է, նրա որևորութեան աղբիւրը, նրա սփոփանքը: Ոչ ժամանակաւոր անյաջողութիւնը, անխուսափելի ժողովրդական ապտամբութեան գործում՝ որի դիմաց կանգնած է կաղմակերպւած բռնապետութիւնը, ոչ դիպլոմատական սպառնալիքը, որ այնքան կոպիտ կերպով այսօր հնչում է ռուսական իշխանութեան կենտրոնից՝ ուղղած ռազմիկ ժողովուրդի հասցէին, ոչ ներքին ատելութեան հուրը, այնքան տխմարութեամբ բորբոքւած յոյն և սերբ ամբոխի շրջաններում, ոչ Գէորգ թագաւորի սուլթանին գրած մտերմական նամակները, այդ ստոր դաւաճանութիւնը՝ հասցրած յունական պատմութեան և այն նահատակներին, որոնց ոսկորները դեռ չեն փտել Թեսալիայի ձորերում: ոչ Հօհենցօլերնեան համակրութիւնները, և ոչ վերջապէս Գոլուխօվսկի-Լամպորֆեան ինտրիգները չեն կարող խեղդել, չքայտնել, սպանել ազատագրութեան կուրը, որի հիմքը դրւած է անցած դարերի ծոցում, և որ արդիւնք է այն հակայական, վիթխարի պայքարի, որ սկսւած է անշարժ, անկար, անընդունակ մօնօլականութեան դէմ՝ փոքրիկ բայց կենսունակ ազգերի կողմից...

Այս պայքարին դիմագրելու համար սուլթանական աշխարհը մի զէնք միայն գործ դրեց — դարևոր խաբը: Եւ նա անգամահատեց: Գարևոր խաբին ժողովուրդները պատասխանեցին մի այլ զէնքով — դարևոր կուրով: Եւ յաղթանակեցին:

Դա պատմութեան դասն է, որ յոյն աւանդեց սերբին. սերբը՝ չերնօգօրցուն, չերնօգօրցին՝ բուր-

գարին, մակեդոնացուն, հային: Հակասութեանական կուռի փիլիսոփայոսութիւնն է դա, որ Միսօլոնգիի և Քիօսի օրերից սկսած՝ թողնուած է Բալկանի և Փոքր Ասիական սերունդներին, իբրև անխախտ, սրբազան մի կտակ, որ մինչև այսօր էլ անդադար և յամառօրէն շնչում է ռազմիկների ականջին, — չտարել ունայն խոստումներով, չհրապուրել ըէֆօրմիների ծրագիրներով, չհաւատալ դարևոր խաբեբային...

**Թ Ղ Թ Ա Կ Յ Ո Ւ Թ Ի Ի Ն Ն Ե Ր**

**Ն Ա Մ Ա Կ Բ Ա Ս Ե Ն Ե Ն**

2 մարտ, 1903

Իմ անցեալ նամակներից ձեզ յայտնի է երկրում տիրող վտանգաւոր վիճակի մասին. այժմ՝ ամէն կողմ լուր է տարածուած, որ շուտով կուռ կը ծագի սուլթանի զօրքերի և գեաւուրների միջև: Թիւրք ամբողջ խիստ դրգուած է քրիստոնեաների, իսկ այս կողմեր՝ հայերի դէմ: Եթէ նախազգուշական միջոցներ չգործադրեն, դուքէ վերսկսեն 1895-96 թւականների սև օրերը: «Գեաւուրներ, ձեր պատճառով է, որ գեաւուր թագաւորները մեր դէմ են կուռում. դուք մեր ձեռքից ո՛ւր պիտի փախչէք», այսպիսի սպառնալիքներով են դիմում թիւրքերը ամէն մի պատահող հայի: Հայդարանցիների ցեղապետ միականի Հիւսէյն փաշան իր աշայով կանչուած է Վ. Պոլիս: Գարունը բացելուն պէս Ալաշկերտն ու Բասենը կը ձմլեն նրա երես առած արիւնարբու ձիււորների ոտների տակ: Գահար քրդական գիւղում ապրող բաւոյցի քիւրդ Արիֆը տեղեկացրել է բասենցիներին, որ գարնանը զգոյշ մնան և Հիւսէյն փաշայի գալու լուրն առնելուն պէս՝ քաշեն գիւղերից բայց ո՛ւր գնան թշուառները, ո՛րի մօտ ապաստան գտնեն...

Արդէն գիտեք, որ միւս աշիրէթներին հրամայուած է գարնանը գումարել Մուշ: Կոտորածի վտանգը ընդհանուր է և ժողովուրդը զուրկ է դիմադրութեան միջոցներից: Արիւնով յղի այս ժամանակներում ո՞վ պիտի մտածէ արգեօք անպաշտպան ժողովուրդի ապահովութեան մասին: Անզօրութեան և անօգնականութեան զայրոյթով լի՝ շար ենք մնացել տարածուած լուրերի և կառավարութեան հրահանգների դիմաց...

**Ն Ա Մ Ա Կ Է Ր Զ Ր Ո Ւ Մ Ե Ն**

20 յունւար, 1903

Թիւրք կառավարութիւնը ծածկաստանի գաւառներում սփռել է այնպիսի պաշտօնեաներ, որոնք գործի գլուխ անցնելուց յետոյ՝ գործում են գրեթէ ինքնիշխանաբար: Նրանց կատարած ոճիրները — վերջին տասը տարւայ ընթացքում — յայտնի են ամէնքին, միաւմի թւելը աւելորդ է այստեղ: Նրանց յանդուգն վայրագութիւնների մի նոր ապացոյց են հետեւեալ դէպքերը, որ տեղի ունեցան Բայազէթի գաւառում:

Ռուսաց վերջին կայսերական տօնը կատարուեց մի սրբաթ օր. այդ օրը, յայտնի է, որ թիւրքաց կիւրակին

է, և ամէն տեղ, ուր կայ զինուորական իշխանութիւն՝ պարզուում է թրքական դրօշը: Որպէս զի միակերպ պատուած չլինի ռուսական տօնը՝ Բայազէթի միւթէսէրիֆը թող չուեց ծածանեցնել ռուսաց դրօշը բերդի պարսպի վրայ: Միջազգային օրէնքով կառավարութիւնները միմեանց պատելու պարտաւորութիւն ունին, նոյնպիսի փոխադարձ յարաբերութեան մէջ եննաւ թիւրքերն ու ռուսները: Հետեւաբար սուլթանից կամ էրզրումի կուսակալից կամ զինուորական չորրորդ բանակի Երզնկայ նստող սպարապետից չէր կարող այնպիսի մի հրաման արձակուած լինել Բայազէթի միւթէսէրիֆին, բայց և այնպէս մոլեռանդ ու յանդուգն թիւրք պաշտօնեան ինքնագլուխ այդ վրիպանքի մէջ ընկնելով՝ Բայազէթի կօնսիւլի դժգոհութիւնը քարուցեց: Աերջնս դիմելով էրզրումի կօնսիւլին, հաղորդեց եղելութիւնը: Խնդիրը բաւական ծանր կերպարանք ստացաւ և վերջացաւ միայն այն ժամանակ, երբ էրզրումի զօրաց ընդհանուր հրամանատար փաշան անձամբ ներկայանալով Կարնոյ կօնսիւլին՝ ներողութիւն խնդրեց և ներկայացրեց նրան իբրև պատիժ՝ միւթէսէրիֆի պաշտօնանկութեան ծանուցագրերը:

Այս դէպքը ունի անշուշտ իր կարևորութիւնը. եթէ թիւրք պաշտօնեան կը յանդգնի կատարել այնպիսի մի գործ, որի հետեւեքը կարող է երկու պետութիւնների դժտութիւնը լինել, հապա ինչեր չի գործեր իր հպատակ խեղճ ու սարուկ հայերի գլխին, որի համար ոչ միայն չի պատժւիր, այլ շատ անգամ իսկ կը վարձատրուի:

Թիւրք պաշտօնեան ու քիւրդ ազան իրենց շրջանների մէջ իւրաքանչիւրը մի մի սուլթան են: Նրանք չեն քաշում շատ անգամ նոյնիսկ մի նստարալ թիւնիւն իրենցից բարձր պաշտօնեաներից ստացած հրամանները: Օրինակ՝ անթիւ են հետեւեալ դէպքի նման դէպքեր. եթէ բանտերում գտնուում են հարուստ պատժապարտներ, որոնք տէր չունեն և սակայն անմեղ են ձանաչուած, կամ թէ գործել են այնպիսի յանցանքներ, որոնց համար կայսերական ներման արժանացած — այդ յանցապարտները բանտի չորս պատերի մէջ մնում են երկար ամիսներ, ձգձգուում է նրանց գործը և «այսօր» ու «վաղը» ազատելու յուսով՝ դատաւորները տանջում են նրան և կողմնակի միջոցներով հասկացնում բանտարկեալին, թէ «մեզ փող է պէտք, վճարիր, որ ազատենք քեզ. հակառակ պարագային, կարող ենք գործդ այնպէս ծանրացնել, որ այլևս տասնեակ տարիներով դուրս չգաս բանտից»:

Քդի գաւառի ճահրուք գիւղում ապրող համիդիէի պաշտօնեայ Իսմայիլ բէյ կօչած քիւրդը խլում է նոյն գիւղի քահանայից եկեղեցու բանալիները և յայտարարում, որ քահանան կարգալուծ է այլևս և իրաւունք չունի տէրտէրութիւն անելու: Եկեղեցու դուռը փակ է մնում և քահանան այդ ինքնակօչ եպիսկոպոսի կամ կաթողիկոսի հրամանին ենթարկուում է ստրկաբար: Գրապատճառն այն է, որ տէրտէրը մի վարժապետի հետ քաղաքս էր եկել և քիւրդը կասկածել է, թէ տէրտէրը իր գողցած տաւարների մասին վկայութիւն է տւել...

Անթիւ են այն նեղութիւնները, որ թիւրք ժողովրդի ու բեկերի ձեռքից կրում են հայերը: Ամենօրեայ ծեծն ու հայհոյանքը այնքան սովորական են դարձել, որ հայերը վարժուել են արդէն... Պատմեք էլի մի փաստ. Կերջանի գաւառակից դէպի Կովկաս գաղթել են



բաւական թուով հայեր: Օրէնքով՝ աղքատ ընտանիքների կամ անտէր գաղթականների տուրքը կը բարդի ընդհանուր ժողովրդի վրայ, բայց կառավարութիւնը այժմ այդ գաղթականների տուրքը քմահաճութեամբ դնում է շատ ու քիչ ունեւոր գիւղացիների վրայ և ստիպմամբ հարկ է առնում, որով վտանգում է հազիւ իրենց կառավարող ընտանիքների գոյութիւնն ևս ու ստիպում նրանց վերցնել մուրացկանի ցուպը և դիմել պանդրխտութեան:

Վերջերս Խնուսի գաւառում պատահեց հետեւեալ դէպքը, որ շատ հրահանգիչ է. համիրիէյի ալայի գայմագամ Թաթաին (Հասնանցի)՝ կուռի բռնելով մի ուրիշ քիւրդ ցեղի հետ՝ զինում է իր ձեռքի տակ եղած Ղարաջօպանցի հայ ծառաներին, որոնց շնորհիւ հակառակորդ քիւրդերը պարտութիւն են կրում և զայրացած դիմում են Խնուսի բերդը ու գանգատում համիրիէյի զօրաց հրամանատար Պօլսեցի Մահմուտ փաշային, թէ Թաթաինի մարդկանց մէջ գտնուում են ֆէդայիներ, որ իրենց յաղթեցին: Մահմուտ փաշան շփոթած այդ լուրից՝ զօրքով դիմում է Ղարաջօպան և պահանջում գիւղացիներից, որ իրեն յանձնեն ֆէդայիները: Գիւղացիք շատ նեղ ընկնելով՝ վարպետութեամբ Թաթաին կանչել են տալիս իրենց գիւղը, որը գալով ներկայանում է փաշային և յայտնում, որ սուտ է այն լուրը, թէ ֆէդայիներ գոյութիւն ունեն այդ կողմերը. իսկական ֆէդայի ես եմ, ասում է նա և ինձ հետ կուռողները իմ հայ ծառաներս են, որոնց ես ինքս եմ զինել՝ իմ անձս պաշտպանելու համար: Փաշան սաստիկ յանդիմանում է նրան. «Գուռ չգիտես, որ բոլորովին արգելեալ է հայի ձեռքը զէնք տալ և կուռի մղել»: Այն ժամանակ Թաթաին ներողութիւն խնդրելով փաշայից և միամտացնելով, որ ֆէդայի ասուած բանը գոյութիւն չունի այդ կողմերում, կանչում է հայ տղերանց, յետ է առնում իր տւած զէնքերն ու միջամտում է նրանց ազատութեան համար, որ և յաջողում է: Նոյնանման դէպք պատահել էր Գունտէաձեում, միայն թէ այնտեղ բռնաճները ցայժմ բանտարկւած մնում են Մուշում:

Ֆէդայիները այնպիսի երկիւղ են ազդել քրդերի վրայ, որ երբ կուռի մէջ մի երկու հայ գանուի հակառակ բանակում, սարսափահար խոյս են տալիս և երեսայի պէս՝ կառավարութեան են ապաւինում: Առհասարակ հայ տղերքը ինչ կուռի մէջ էլ որ լինեն, իրենց կողմը յաղթող է հանդիսանում: Այդ է պատճառը, որ քիւրդ ցեղապետները՝ ինքզինքնին ուժեղացնելու համար՝ հայ տղերանց են դիմում և հայերից են ընտրում իրենց վարձկան զինւորները:

**Ն Ա Մ Ա Կ Մ Շ Ո Յ Գ Ա Ի Ա Ռ Է Ն**

17 փետրւար, 1903

Խնուսի Խարաջօպան գիւղի վարժապետ պ. Հրաչիան, բնիկ կարնեցի, իր ընտանիքով ապրում էր այնտեղ և ամբողջ գիւղը գո՛՛հ էր իր գործունէութիւնից: Նրա հետ թշնամացել էր մի թրքամուլ հայ, որը ամէն անգամ վարժապետին պատահելիս՝ սպառնալիքներ էր անում, թէ «ես քեզ մի օր պիտի սպանեմ»:

Խարաջօպան գիւղում կայ մի յիսնապետ և զինւորներ,

որոնք մտերիմ էին վերոյիշեալ հային: Սրանից մի ամիս առաջ, երբ գիւղական վարժապետը ձեռնարկել էր գիւղացոց համար մի ներկայացում տալու՝ յօգուտ ուսումնարանի, և երեկոները փորձեր էր անում, վերջին փորձից յետոյ հետեւեալ դէպքը տեղի ունեցաւ. փակագծի մէջ ասնէք, որ կոտորածներից յետոյ ընդհանրապէս և մանաւանդ ինքնապաշտպանութիւն ցոյց տուող գիւղերում, ուր զինւորներ են բնակում, օրէնք է դրւած, որ թրքական ժամը 2-ից վերջը այլևս գիւղացիք տնից դուրս չգան: Ուսուցիչը դուրս է գալիս ուսումնարանից ժամը 3-ին, և մի քիչ առաջանալով փողոցում՝ լսում է անմիջապէս որոտագին ոտնաձայներ՝ «կանգնի՛ր, ո՞վ ես դու», և յիսնապետը երկու զինւորներով վրայ է հասնում՝ գուցէ մութի մէջ կանգնած էր և վերոյիշեալ հայը: Նրան բռնում են և այնքան ծեծում, որ հազիւ կարողանում է քաշքշելով զինւորների հետ գնալ մինչև այն գոմը, ուր բանտարկւում է ամբողջ գիշեր:

Թէ այդ գիշեր ինչ չարքարանքներ են տւել նրան, ոչ որ գիտէ, կամ ո՞վ գիտէ ի՞նչ խմացրին նրան, որովհետև խեղճ երիտասարդը այժմ երբեմնապէս իր միւր կրծնիւր չափ կատաղում է, երբեմն էլ անխօս ապուշ է կարում. յիշելու և ուէ բան պատմելու կարողութիւն չունի. երբ յիսնապետի, հայի կամ զինւորների անունը տաս, սարսափից վեր է թռչում. մենակ չէ կարող մնալ, միշտ ուզում է, որ մէկը իր մօտ լինի: Այժմ նա փոխադրւած է Վարին, ուր եթէ ձեռնհաս բժիշկներ գտնւէին, գուցէ կարելի լինէր բժշկել, բայց այս պայմանների մէջ խեղճը ընդմիշտ թշուառացած է: Կնոջը, որ յղի է, չհամարձակեց այս ցրտին մինչև հոն տանել և թողուցել է Խնուսի բերդը:

Ո՞ւմ օձիբից բռնել կամ որի՞ն գանգատել. մեր գանգատներին լսող չկայ: Հայը բանտ նետւելուց յետոյ, կարծես յաւիտենականութեան մէջ կը փակւի. էլ ոչ հարցնող կայ ոչ փնտրող: Եթէ տէր մը ունեցաւ, որ բուռը լին ոսկիներով մօտենայ դատարանին, բանտարկեալը մի օրում կը վերստանայ իր ազատութիւնը, եթէ ոչ... այլևս ի՞նչ խօսենք վրան:

Վարդոյ գասապայի շըջանում քիւրդերը այժմ սովորութիւն են դարձրել հայ աղջիկներ փախցնելու հետերնին ամուսնանալ: Այնքան յաճախակի են այդ տեսակ դէպքերը, որ տեղացի հայերը վարժել են իրենց աղջիկները քրդի տան հարս տեսնելու: Շատ քիւրդերի անուներն են տալիս, որոնց կանայք կամ մայրեր հայուհիներ են. հակառակը՝ մի քիւրդ աղջիկ հայի տան մէջ հարս տեսնւած չէ և այդպիսի ստրուկ մի ազգի մէջ հարս չի գար նա. իր ցեղական հպարտութիւնը այդ չի ներիւր. քրդուհիները սիրում են ով կտրիճ է և արիւնարբու. նրանք գլուխ չեն ծռում ոչ թշնամուն և ոչ էլ անիրաւ իշխանութեանը: Նրանց իրաւունքը իրենց սուրի ու հրացանի ծայրից է կախւած:

Քրդերի հետ ամուսնացած հայուհիները, իհարկէ, իսպառ չեն խզում հայութեան հետ: Նրանք թէև իւրացնում են քրդական լեզուն ու կրօնը, բարքն ու սովորութիւնները, այնուամենայնիւ չեն մոռանում իրենց ծագումը և երես չեն դարձնում իրենց ցեղակիցներից: Պատահում է, որ քրդի հայ կինը բարերար ազդեցութիւն է ունենում իր զաւակների վրայ և նպաստում է հայ-քրդական բարեկամութեան: Ահա ձեզ մի օրինակ:

Հաղորդել էի արդէն, որ Գունդէմիրում (Վարդօ) տիրապետող Զպրանցիների աղան՝ Հասան բէկը միացած իր հպատակ հայերի հետ, կուսել էր իր մօտիկ ազգական Սնճարու Իպօյի դէմ և բաւական վնասներ էր հասցրել նրան: Վերջինը անձարացած՝ դիմել էր կառավարութեան և գանգատել որ համարիչի գայմագամ Հասան բէկը Ֆէդայիներ է պահում, որոնց օգնութեամբ իրենց այնքան վնասներ է տւել: Կառավարութիւնը բռնեց թէ հայերից, մօտ 13 հոգի, և թէ Հասան բէկը իր հօրեղբայր քէօն Ահմէի հետ, որը նոյնպէս գայմագամ է: Հայերը գնացին Մուշ, իսկ քրդերը Էրզրում, ուր հսկողութեան տակ գրեցան զինւորական բանտում, որ Մոկրով անունով հին մի շէնք է, յոյների տիրապետութեան ժամանակից մնացած: Նրանք կ'աշխատէին իրենց դատը պաշտպանել և յոյս ունէին, որ եթէ իրենք ազատեն, պիտի աշխատէին իրենց պատճառով բանտարկւած հայերին էլ ազատել:

Հասան բէկը Գունդէ անունով մի հայուհու որդի էր, 25-27 տարեկան առոյգ ու կտրիճ մի երիտասարդ, որ սիրում էր հայ ծառաներ և հայ հպատակներ էլ ունէր. աւելի նրանց էր վստահում, քան իւրայիններին: Նրա մայրը կենդանի է այսօր և գտնւում է Գունդէմիրում: Նա առոյգ է, առողջ ու գեղեցիկ, շնայելով որ տարիքը առած է արդէն, նա քիւրդերի մէջ առաջինն է իր տեսքով ու խելքով: Դէպքի ժամանակ, երբ Վարդօյի դայմագամը հրամայեց քիւրդերին գիւղերը արշաւել, կոտորած ու կողոպուտ անել—Հասան և քէօն Ահմէն պատրաստուում էին արշաւանքի և իրենց գիւղից պիտի սկսէին ներսը սուրբերը սրում էին եռանդով, հրացանները փայլեցնում և ձիերի սարքերը պատրաստում: Յանկարծ ներս մտաւ գեղանի պառաւը և ընկնելով որդու և իր տագեր ոտները սկսեց լաց լինել: Ամբողջ գիւղին իշնող կինը թէ գեղեցկուձեամբ և թէ իշխանի տիկին լինելու իրաւունքով, միակ մեծ խաթունը լաց էր լինում, այն էլ ոչ թէ օտարների մօտ, այլ իր կաթովը մեծացրած որդու մօտ, այն որդու, որը նրան կանչելու չի ասել «է՛հ, հայ շուն» կամ է՛հ, քեաֆիր կին», այլ մայրիկ, սիրելի մայրիկ: Եւ ի՞նչ էր ուզում նա. այդ երկու հազարապետները քարացել էին: — Ինչո՞ւ ես լաց լինում նանէ: — Որդիս, սիրելի տղաս, չէ՞ որ ես քո մայրդ եմ, կաթովս մեծացար բազուկներս վրայ, ես քո հօրդ սիրու համար, քո սիրու համար կրօնքս ուրացայ, բայց սիրտս չկարողացայ հանել դէն պցել, չէ՞ որ նրանք, որոնց կոտորելու կը պատրաստէիք, իմ արիւնակիցներն են, նրանց սպանելով դուք ինձ մահ էք պատճառում. ի սէր Աստուծոյ, ի սէր հօրդ գերեզմանին, ձեռքերդ մի թաթախիր ցեղիս արեան մէջ»:

Քիւրդ զինւորականները իրօք յուզեցին և խոստացան Գունդէ նանէին, որ ոչ մի հայի ձեռք չպիտի տան և պիտի անվնաս պահեն իրենց իրաւունքի տակ գտնուող գիւղերը: Անմիջապէս Վարդօ լուր ղրկեցին, որ չհամարձակին իրենց կողմը մտնելու, թէ չէ հայերի փոխարէն իրենք պիտի կուսն: Ահա այսպիսով կոտորածի տարին ալատեցին բաւականին գիւղեր այդ աղաների շնորհիւ:

Համարիչի գայմագամ Ռըզախ անունով մի քիւրդ (բնակութիւնը Խնուսի և Բուշանլիսի միջավայրն է), որ շատ անգամներ տեսել է Կարնոյ բանտը, վերջերս նորից շնորհ բերեց այնտեղ: Թշնամի լինելով մի հայի հետ, նրան ցանկանում էր սպանել և միշտ հսկում էր, որ

նա ճանապարհորդելու միջոցին վրայ հասնի: Վերջերս այդ հայը մի թիւրք հարիւրապետի հետ ճանապարհ է ընկնում: Հայը վախենում է տանից դուրս գալու. հարիւրապետը ասել է, որ յետ հետգ եմ, Ռըզախը ո՞ւմ շունն է, որ համարձակի քեզ ձեռք տալ: Եւ դուրս են ելնում: Ռըզախը լսելով՝ հետևում է նրան: Յարմար դիրք մը բռնելով՝ նա որոշում է մի գնդակով հարիւրապետին և հային շամիրել և յաջողում է. նրա գնդակը հարիւրապետի կուսակէն մտնելով հայի կրծքից դուրս է գալիս: Զինքը շրջապատող զինւորներից երկուքն էլ տան դուռը սպանած լինելով — բռնում է և տարւում: Կարնոյ բանտը, իհարկէ ոչ թէ մի հայի նկատի առնելով, այլ կառավարութեան հարիւրապետն ու երկու զինւորները:

**Ն Ա Մ Ա Կ Տ Ի Վ Ի Ի Կ Ե Ն**

17 դեկտեմբեր, 1902

Հայ ազգաբնակչութիւնը տեղս նեղ և յուսահատական կացութեան մէջ է: Ո՞ր մէկը թւում մեր կրած զրկանքներէն: Սեպտեմբեր ամսուն մէջ երկու երիտասարդներ Օրդուն հայաբնակ գիւղէն Արաբկիր գնացած էին խաղող բերելու և ծախելու. վերադարձին քէլէճարցի ըսած քրդերը վրանին յարձակելով՝ իրենց գիւղին մէջ զրկնք կատարի կերպով ծեծելէ յետոյ, ամբողջ ունեցածնին կողոպտած էին. խեղճ տղայքը հազիւ փախչելով կրցեր էին ազատել: Իզուր բողբեցին կառավարութեան, որը հակառակ վկաներու բացորոշ յայտարարութեան, անպարտ արձակեց քիւրդերը, առարկելով թէ անոնք ճշմարիտ մուսուլմաններ են, սուա չեն խօսիր: Խեղճերը այսպէս գոյութիւննին փչացուցած, սրտաբեկ տուն վերադարձան:

Քաղաքիս մէջ ութը տարեկան հայ աղջիկ մը անհետացաւ: Խեղճ ծնողքը յուսակուտուր քանի մը օր աստ-անդ փնտրելէ յետոյ՝ դիպածով զայն գտան թիւրք գրացւոյն տունը. թիւրքը զայն խաբելով ներս տարած և հրէշաբար բռնաբարելէ յետոյ՝ տունը արգիլած էր: Բժշկական դարմանումներով հազիւ կարելի եղաւ ազատել խեղճ մանկան կեանքը. իսկ հրէշ թիւրքը երեքօրեայ կարճ ու ձեւական բանտարկութեամբ միայն ազատ արձակեցաւ: Խեղճ հօր բողբեցին անխելի մնացին. դժբախտ, անպիտան գեաւուրներ, մենք շարունակ ձեզմեջ պիտի զբաղենք՝ ըսելով վունացին զայն:

Շահելու ամէն ասպարէզ փակ է մեր առջև. իսկ թահսիտար ըսած թալանձիններն երբեք չեն դադրիր: Ժողովուրդը ալ անկարող է տոկալ այս բռնակալութեան:

**Կ Ո Վ Կ Ա Ս Ե Ա Ն Խ Ա Բ Ի Ի Կ Ն Ե Ի**

ՔՍԵՆՆՈՐԿՈՒՆՈՐՈՐԻ ՆԱԽԵԿ (Վերջ)

Պետերբուրգ 21 յունւար, 1903

Գէորգ կաթողիկոսի մահից յետոյ, նախ քան նրա յաջորդի ընտրութեան ձեռնարկելը, Պետերբուրգի կառավարութիւնը յանձնեց բարօն Նիկօլային կազմել մի գեկուցում կաթողիկոսական խնդրի մասին: Բարօն Նիկօլայի, կովկասեան փոխարքայի դիւանապետ նախկին

կառավարիչ, երբեմն մինիստր ժողովրդական լուսաւորութեան, կովկասեան գործերին տեղեակ համարող մի անձ, աւելի խորամանկ, քան խելօք հպետական գործիչ», ձեռնարկեց այդ գործին և 1883-ին ներկայացրեց ներքին գործերի մինիստրութեան մի գ ա ղ տ ն ի գ ի կ ու լ գ ա-գ ի բ ր: Պատահմամբ, թէ ուէ պաշտօնիայի հիողասիրութեան՝ շնորհիւ այդ կարևոր հղովումները պետական պահարաններէ անցաւ անհանգիստ մարդոց ձեռքը և հրապարակ եկաւ:

Նա սկսում է այսպէս.

«Ամենայն հայոց կաթողիկոսի մար ի 6 դեկտ. 1882 թւականի և այս պէպի պատճառով ամենայն հայոց հայրապետի մօտերումս կատարելիք ընտրութիւնը անհրաժեշտ է կայուցանում հասուն քննութեան նմանակի պետական բարձր շրջանների մէջ հետեւեալ երկու յոյժ կարևոր խնդիրները.

ա) Թէ գործողութեան ինչ եղանակի պարտ է հետեւել մեր կառավարութիւնը յառաջիկայ նոր կաթողիկոսական ընտրութեան ժամանակ:

բ) Որպիսի պարտ է լինել մեր կառավարութիւնը նոր կաթողիկոսի վերաբերմամբ՝ նրա հաստատելուց և իր բարձր պաշտօնավարութեան մէջ մտնելուց յետոյ »:

Երկար բացատրութիւնից յետոյ, վերջին հարցին նա պատասխանում է.

«... Բայց որովհետեւ չնայելով ոչ մի զրուցութեան՝ վերջիվերջոյ կարող է դարձեալ Տաճկաստանի լուսաւորչական հայ հոգեւորականներից մին նստել հայրապետական Աթոռի վրայ, որ կը խարէ մեր յոյսերն, ինչպէս որ խարբային հանդուցեալ Մատթէոսն և Գէորգը — ուստի աւելորդ չի լինիլ ժամ առաջ որոշել մեր գործողութեան եղանակի այն էական հիմքերն, որոնց որ հետեւելու է մեր կառավարութիւնը իր յարաբերութիւններին մէջ էջմիածնի ակթոռի հետ Գործողութեան այդ եղանակը սահմանած էր Կ. Պոլսի մեր նախկին դեսպանից, նրա հեռագրի մէջ 19 յունիսի հետեւեալ խօսքերով.

Il serait opportun que l'administration du Caucase eût soin d'agir, dès l'installation du nouveau patriarche, afin de le maintenir dans les dispositions correctes \*).

Կովկասի գլխաւոր վարչութիւնը ընդունեց գործողութեան այդ հիմնագրին և հետեւում էր նրան առանց երբեք շեղելու յարգութեան և ակնածութեան այն ձեւերից, որոնք պահանջուած էին կաթողիկոսի կոչումն կրող անձնավարութեան հետ բանակցելիս. բայց և այնպէս նա հարկ է դատում ազդու ապէս դիմադրել նրա բոլոր ձգտումներին՝ ազատելու մեր օրէնքների և մեր կառավարչական հրահանգների հնազանդութիւնից, Այս մասին բնական վկայութիւն կարող են տալ Կովկասի նախկին փոխարքայի գլխաւոր վարչութեան բանակցութիւնները ներքին գործոց նախարարութեան հետ. մեր վարչութիւնը անպատեհ է համարում գիշորութիւններ բանակցել ծանրակշիւ վարչական նշանակութիւն ունեցող խնդիրների մէջ: Սակայն այս տեսակէտը ննջուկ չէր պտտում բարձր կենտրոնական կառավարութեան կողմից. այս վերջինս գոզակա առաւել կարևոր էր դատում յամենայն դէպս հայտ ընթացքի հետեւել անդուցեալ հայրապետի հետ հարդրակցելիս՝ առանց պնդելու, որ նա անպայման հնադանդէր օրէնքի պահանջներին—այն յոյսով անշուշտ, թէ այսպիսի եղանակով կաթողիկոսի յամուտովիւնը կ'առքւէր և վախենալով թերեւս, թէ նա անհասց թշնամական քայլ գործելու կրտսիպէր բուն վարմունքից: Սակայն հետեւանքներ այդ յոյսը չ'արդարացուցին, իսկ երկուդները հաղիւ թէ հիմնաւոր էին: Հանգուցեալ Գէորգ կաթողիկոսը, իրաւ, ասում էր զայրացման ժամանակ, թէ

նա կը թողնէ էջմիածինը և Տաճկաստան կերթայ, սակայն դժւար թէ հարկ լինէր կարևորութիւն ընծայել այդ սպառնալիքներին մի կողմից այն պատճառով, որ նա չէր հրաժարուել էջմիածնայ վանքի մէջ վայելած նիւթական օպուսներէր, միւս կողմից էլ այն պատճառով, որ նա չէր կարող չզիտել թէ վերջիվերջոյ առաւել մեծ նշանակութիւնն հաւանօրէն չէ թէ կաթողիկոսին կոչումն կրող անձին սեփական կը մնար, այլ նրա կեցութեան տեղին, որ գտնուում է Ս. Գրիգորի գերեզմանի վրայ: Յամենայն դէպս ոչ մեր կառավարութեան արժանապատուութիւնը, ոչ էլ մեր ներքին քաղաքականութեան շահերն չեն թոյլ տալիս, որ կաթողիկոսն մտանար, թէ նա առասպ կայսեր հպատակն է և առասպ օրէնքների նմանակայն նրա մէջ այս համոզմունքն հաստատուն յարաբերութեան պատշաճի ձեւերն լիովին յարգելով, թերեւս առաւել հարկաւոր և էական է, քան թէ առաւել կամ նւազ յոյսեր դնելն նրա մասնակցութեան վրայ ի նպաստ մեր արտաքին քաղաքականութեան շահերին: Ամենայն հայոց ապապայ կաթողիկոսի հետ մեր կառավարութեան ունենալիք յարաբերութիւնների իրեւ նշանաբան պէտք է ընդունել՝ ս ու ա Վ ի տ ե թ ի ն մ օ ս օ . Ֆ օ Ր տ ի տ ե թ ի ն Ր է (ձեւերու մէջ փափուկ եղիր, գործի մէջ յամառ):

Ներքին գործերի մինիստրութիւնը, հարկաւ, հրահանգներ աւեց՝ հիմնած այդ ղեկուցագրի վրայ: Այդ հրահանգներով կառավարութեան ներկայացուցիչը գնաց էջմիածին՝ ներկայ լինելու 1884-ի ընտրութեան: Ընտրեց անմոռանալի ներսէս, որ Բերլինի դաշնագրից յետոյ, իբրև մէկը 61-րդ յօդուածի հեղինակներից, դարձած էր հայ ժողովրդի սիրելին, նրա յոյսերի մարմնացումը: Սակայն նախ քան Կ. Պոլսից էջմիածին մեկնելը՝ վարժապետեան մի քանի առաջադրութիւններ արեց ուսաց կառավարութեան իբրև անհրաժեշտ պ ա յ մ ա ն ն ե թ ի ի կ ա թ ո ղ ի կ ո ս ու թ ե ա ն : Կառավարութիւնը մերժեց. ներսէս հրաժարեց այլ պայմաններով կաթողիկոսական ծիրանի հագնել, և քիչ անցած՝ Պետերբուրգից յայտարարեց, որ պէտք է ն ո Ր ը ն տ Ր ու թ իւ ն անել պատճառաբանելով, թէ 1884-ի ընտրութեան ժամանակ տեղի են ունեցել անկանոնութիւններ: Խաղը աչկարայ էր: Անկանոնութիւնների մասին խօսք չկար, երբ յոյս ունէին ներսէսին ընկձել, սակայն երբ այդ անկարելի եղաւ ս տ ե ղ ծ ա գ ո Ր ծ ե ց ի ն ա ն կ ա ն ո ն , ա պ օ Ր ի ն ի գ օ Ր ծ ո ղ ու թ իւ ն ն ե թ , բեկանելու ընտրութիւնը, մոռացած այն պարզ փաստը, որ կառավարութեան պաշտօնական ներկայացուցիչը ինքը՝ ճանաչել էր ընտրութեան ամբողջ գործողութիւնը ճիշդ և կանոնաւոր, և տւել իր վաւերացումը:

Հասաւ 1885 թւականը, նոր ընտրութեան տարին: էջմիածին գնաց, ինչպէս միշտ, կառավարական պաշտօնեայ, բայց այս անգամ շատ վճռական, շատ կտրուկ հրահանգով — դիմադրել ուէ թ իւ ը ք ա հ ա յ ե պ հ կ ո ս ի թեկնածութեան: Ամօթ մեզ: Այդ հրահանգի իրագործման գործը հնեցուցիցից՝ մէկն էլ մի հայ եպիսկոպոս էր, ըստ երևոյթի շատ սիրող հայոց կրօնական աթոռը, երբեւն՝ հաւատարիմ «սպասաւոր» լինելու նրա պետին և նրա շահերին: Իբրև առաջին թեկնածու հանդէս բերեց Մելքիսեդեկ Մուրատեան, առաջնորդ Ձմիւռնիայի, կովկասեցի, հեղինակ «Եկեղեցական պատմութեան», և յետոյ հեռացած Ռուսաստանից և ճանաչուած՝ շնորհիւ իր գրքի, իբրև «հակաուսական» մարդ: Կառավարութեան ներկայացուցիչը ոչ մի ձայն չհանեց այդ թեկնածութեան դէմ: Պէտք էր արտաքուստ վարուող լինել «ձեւերի մէջ փափուկ»: Բայց ներքուստ յամա-

\*) նպատակայարմար է որ Կովկասի վարչութիւնը շանք գործ դնէր կաթողիկոսի հաստատելուն պէս, ուղիղ տրամադրութիւններ մէջ պահելու նրան:

ուսթեամբ, նախօրօք տեղի ունեցած «պատրաստութեան» համաձայն՝ առաջ մղեց Մակար եպիսկոպոսը, իբրև երկրորդ թեկնածու: Աշխարհական պատգամաւորներ և նրանց հետ ժողովրդական ղեկավարները կողմնակից մի խումբ հոգևորականներ, գլխաւորապէս թեմական առաջնորդներ՝ ջանք գործ գրեցին, եռանդուն ջանքեր, ընտրելու իբրև երկրորդ թեկնածու՝ Խրիմեանին: Բայց անաղոյ՝ Նրանց խաբեցին Մակարի թեկնածութեան նախապատրաստած կողմնակիցները, Էջմիածնի «սեւագրութիւն» մականւանները:

Օրօրներ կարգալով միամիտ աշխարհականներին, մի քանի վաճառած վեղարաւորների թելադրութեամբ՝ հոգևորականների մի խումբ, գիշերով, — ընտրութեան նախորդ գիշերը — ժողով գումարեցին, գաղտնի իհարկէ, և վճռեցին ձայն տալ Մակարին: Կառավարութեան ներկայացուցիչը այդ իհարկէ գիտէր, նախապատրաստել էր... Միւս օրը տեղի ունեցաւ անսպասելի բան, — երկրորդ թեկնածու՝ Խրիմեանի փոխարէն հանդէս եկաւ Մակար, որի անժողովրդական անւան մասին, նոյնիսկ «գաղտնի» կողմնակիցները չէին համարձակուում հրապարակաւ խօսք բանալ... «Արձկանները» յաղթանակ տարան, և այդ ընթացքի արդէն գիտէին, որ միամտութիւն է կարծել թէ առաջին թեկնածուն թէև ընտրած միաձայն, համարեա երկու անգամ աւելի ձայներով, քան երկրորդը, կարող է արժանանալ կայսերական հաստատութեան: Եւ պատմում են, որ «գաւազիքների» պարագլուխ եպիսկոպոսը, ընտրութիւնից մի քանի օր յետոյ, Երևանից դէպի Թիֆլիս անցնելիս՝ բարձրաձայն ասաց իր բարեկամ-քահանային. «Տէր հայր, երեք անից յետոյ կը վերադառնամ Մակարի հետ»:

Եւ Մակարի հետ վերադարձան նրանք բոլորը, և նրանց հետ՝ տխուր օրեր Էջմիածնի համար: Կառավարութեան առաջին հարւածը աջուած էր: Ընտրութեան անկախութիւնը բեկանւած, ոչնչացրւած: Գժւար չէր բեկանել նոյնիսկ կաթողիկոսին, և անել տալ ինչ ուզում էին: Եւ արեցին: Աւայդ օրից խելձ ծերունին, որի մասին ամբողջ Արարատեան նահանգը մինչև այսօր էլ երգում է՝

Մակար քանդեց ազգի տունը,

փոխանակ լինելու իր հօտի իրաւունքների և ցանկութիւնների արտայայտիչ, եղաւ նախ՝ լսող, ապա՝ աղերսող, խնդրող, կարեկցութիւն հայցող: Նա այլևս չէր պահանջում, չէր բողոքում, այլ միմիայն աղերսում էր կարեկցել իրեն, չդնել իրեն շատ ծանր վիճակի մէջ՝ ազգի առաջ... «Աերջապէս ձեր նշանակածն եմ» — ահա նրա անուղղակի դիմումների հոգեբանութիւնը: Եւ կառավարութիւնը համաձայնեց յիւրաւի, որ շատ էլ «ծանր վիճակի մէջ չպէտք է դնել» իր նշանակածին: Ահա թէ ինչու, օրինակ, փակելով հայոց դպրոցները 1885-ին, նոյն կառավարութիւնը, իբրև ա ն ձ ն ա կ ա ն շ ն ո Ր Տ ի թեկնածուին, թողարկեց վերաբանալ դպրոցները 1886-ին, արտօնելով Մակարին շարունակել նրանց ղեկավարութիւնը, յայտնի պայմաններով: Մինչև վեց տարի: Եւ Կովկասի մէջ շատերը լրջօրէն պնդում էին, թէ վեց տարւայ թողուցութեան մէջ փոքր տեղ չէր բռնում այն հանգամանքը, որ զառամեալ հայրապետը մինչև վեց տարի կը մեռնի, և հետևարար դրանով էլ կը փակի ապագայ թողուցութեան փափուկ հարցը... Այդպէս էլ եղաւ. պայմանաժամը չլրացած՝ կաթողիկոսը մեռաւ, ճշգրտօք է ասել՝ խելդամահ եղաւ...

Եկաւ Խրիմեան 1893-ին. եւ երբ ընկեր ոգևորութեան արաղակները և հանգան հրապարակութեան կանթեղները, Էջմիածնի կիսախարխուլ տաճարի շուրջը վերսկսեցին, և այս անգամ տասնապատիկ խստութեամբ, կաթողիկոսական իրաւունքների խորտակման ծանր խաղերը: Սահմանի միւս կողմում ծովացել էր մի ամբողջ ժողովրդի արևն: Յարմար ընթացք էր ուրեմն հարւածը ուժգնապէս կրկնելու: Եւ կրկնեցին: Եւ երեքկնեցին: Ինչ մնաց կաթողիկոսի ձեռքում, ինչ իրաւունք և ինչ արտօնութիւն: Աչինչ, կամ համարեա ոչինչ:

Կար ժամանակ, որ նոյնիսկ «թուլակամ» Գէորգ սպառնալիքներ էր անում: Էլ չենք խօսում այն հսկայական սպառնալիքների մասին, որ անում էին Ներսէս Աշտարակեցի, Մատթէոս: Այդ տեսակ սպառնալիքների կամ դիմումների մասին այլևս գաղափար չունէին Էջմիածնում 90-ական թւականներից յետոյ: Մակար եղաւ հլու կատարող: Իսկ մեծանուն Խրիմեանը, — իրաւազուրկ վանահայր, որ մի իրաւունք միայն ունի, ձամբայ ելնել ուր ուզում է, և երբ ուզում է, միշտ աննկատ, միշտ առանց կարեւորութեան...

Աչ մի իրաւունք չմնաց անձեռնմխելի, իր ուժի մէջ: Եւ այժմ՝ կաթողիկոսը անկարող է նշանակել իր ցանկացած հոգևորականին առաջնորդ, սինօզի անդամ, նոյնիսկ յաջորդ: Եթէ թեկնածուի սիստեմը միշտ գոյութիւն ունէր, բայց առաջին թեկնածուն համարում էր կաթողիկոսի ցանկացածը և յարգում էր: Այժմ՝ այդ էլ չկայ: Նա անզօր է նոյնիսկ ցանկացած մարդուն բահանայ ձեռնադրել: Ամուսնական խնդիրները, մեծ չափով հանւած են իր իրաւասութիւնից: Գպրոցական հարցը, երբեմն կաթողիկոսի ժողովրդականութեան գլխաւոր կուռնը, այլևս գոյութիւն չունի: Նա այդ ասպարիզում չքացած է: Նրա կարծիքը չեն հարցնում նոյնիսկ այն դէպքում, երբ նշանակում են մի պրօկուրօր կամ ուէ ստորին պաշտօնեայ սինօզի համար: Նրա և վեհարանի շուրջը նշանակում են լրտեսներ, բացարձակ, առանց քաշելու: Հեռացնում են վանքից ուժ կամեում են, քարտում են, երբ կամեում են: Նրա կարգադրութիւնները մնում են անկատար, խնդիրները՝ անհետեւեք: Նոյնիսկ մի աննշան պաշտօնական ամսագիր, «Արարատ» երեսուն տարուց իվեր հրատարակում էր Էջմիածին, կաթողիկոսների թողուցութեամբ, առանց գրաքննիչի, խլեց նրա ձեռքից և յանձնեց Թիֆլիսի գրաքննութեան: Կաթողիկոսը խնդրեց գրաքննութիւնը յանձնել գոնէ Երևանի ուէ պաշտօնեայի, որպէս զի ամսագիրը շաբաթներով չուշանայ՝ Թիֆլիս ուղարկելու պատճառով — բայց անօգուտ. այդ էլ մերժեցին, և այժմ, շնորհիւ այդ «առասպելական» խստութեան, Էջմիածնի պաշտօնական թերթի գարնան համարները լոյս են տեսնում աշնան, իսկ ձմրանը՝ յաջորդ տարւայ ամառնամուտքին...

Փաստերին թիւ չկայ: Դիմումն արեց՝ մէկին ձեռնաբանում ուսուցիչ պահելու — մերժում: Խնդրեց գաղթականների համար — մերժում: Ուզեց կայսեր մի խնդիր ուղղել — մերժում: Պետերբուրգ կամեցաւ գնալ — մերժում: Ուրիշին ուզեց ուղարկել — դարձեալ մերժում: Դիմեց հանգանակութեան համար — մերժում: Խնդրեց՝ դպրոցական շէք կառուցանելու համար — մերժում: Միջնորդութիւն մի քանի անձանց համար — մերժում: Եւ մերժում է, յուսահատուած, իրաւազուրկ կաթողիկոսը տարիներից իվեր իր վիշտը մոռացութեան



տալու ուրիշ եւք չունի, բայց եթէ ձի նստած՝ ճանապարհորդել, կամ վեհարան քաշած՝ ստանաւորներ գրել...

Հարց՝  
Ի՞նչ պիտի լինի սրա վախճանը.  
Մինչև ե՞րբ պիտի շարունակի.  
Ո՞վ պիտի լինի դրա առաջն առնողը:

Է. ԱԿՆՈՒՆԻ

### Հ Ա Յ Ա Ս Տ Ա Ն Ի Վ Ի Ճ Ա Կ Ը

ՏԻԳՐԱՆԱԿԵՐՏ ՎԻԱՅԷՏԻ ՆՓՐԿԵՐՏ ՇՐՋԱՆԻ ՎԻՃԱԿԸ

10 սեպտեմբեր, 1202

Նփրկերտ աւանը կը գտնուի Տիգրանակերտի հիւսիսային արևելեան կողմը, անկէ 16 ժամ հեռաւորութեամբ, կը պարունակէ 2,500 բնակիչ, որոնցմէ 700-ը մահ-մէտական է, 1,500-ը հայ և 300-ը օտարազգի քրիստոնեաներ, այսինքն քաղդէացի և ասորի: Նփրկերտի հիւսիսային կողմը լեռնային է. կը պարունակէ 20-ի չափ քրդաբնակ գիւղեր, որոնց ամբողջութիւնը երկու գլխաւոր մասի կը բաժանուի՝ Նարըզ և Մըզուր: Ասոնցմէ անդին կը տարածուի Պատրգան աշերէթին շրջանակը՝ Խիան և Խուլմի գաւառակները, որոնք Փասուրի գայմագամութեան կը վերաբերին և Խըջալիկ գետակով կը զատուին Նփրկերտի վիճակէն: Նփրկերտի արևելեան, արևմտեան և հարաւային մասերը կը կազմեն արգասաւոր դաշտեր, ուր ցանուցիք կը գտնուին բազմաթիւ գիւղեր, ասոնցմէ հայաբնակներուն թիւը 50-ի և քրդաբնակներունը՝ 30-ի կը հասնին: Քրդաբնակ գլխաւոր գիւղախումբը կը գտնուի արևելեան կողմը և կը կազմէ Շէխտոտան աշերէթին շրջանակը, ասոր սահմանը կը հասնի մինչև Պաթման գետը, ուսկից անդին կը տարածուի Արջի գայմագամութեան վիճակը:

Նփրկերտի վիճակին ընդհանուր բնակչութիւնը — աւանէն դուրս — 25,000-է աւելի կարելի է հաշուել 12,000-ը քիւրդ, 13,000-ը հայ: Ասոնք ամբողջովին երկրագործութեամբ կը պարապին: Նփրկերտի հարաւային-արևելեան կողմը կը գտնուի Պշերիկի դաշտը, որ կը պարունակէ 80-ի չափ գիւղեր, մեծ մասամբ հայաբնակ: Նփրկերտի գայմագամութիւնը ուղղակի կազմած է Տիգրանակերտի կուսակալութեան հետ, առանց միջնորդութեան քրիստոնեան:

Նփրկերտի Հաղթ գիւղին մէջ կը բնակին երեք նշանաւոր քիւրդ աղաներ՝ Ռաշիդ, Սատուն և Սատրգ: Կան երեք բէկեր ալ՝ Սիւպին, Պատրի և Խատի՝ միւսնոյն գերդաստանէն: Այս աղաներն ու պէկերը մեծ ազդեցութիւն ունին Նփրկերտի ընդհանուր վիճակին վրայ Բռնութեամբ տիրացած են հայաբնակ գիւղերու գրեթէ ամբողջութեան: Հայերը ներկայիս մէջ իրենց ստրուկ կը մշակեն այն հողերը, որ անցեալին մէջ իրենց սեպհակաւորութիւնն էր, բայց այսօր կը պատկանին աղաներուն: Վերև յիշատակած քիւրդ աղաներն ու պէկերը, որ անհատնում հարստութիւն դիզած են իրենց յափըջտակութեան շնորհիւ՝ մեծ յարգ և աղքատութիւն ունին կառավարութեան առջև: Այն գայմագամը, որ չ'ուզէ օրէնքին արդարութեան քծած ճամբէն շեղիլ և կամ խաղալիք չի դառնալ այդ աղաներուն քմահաճոյից անպատճառ պաշտօնանկ կ'ըլլայ: Աղաները գիտեն Տիգ-

րանակերտի ճամբէն, ոսկիները ամէն դժուարութիւն կը յաղթեն: Այսպէս, հինգ ամիս առաջ, պաշտօնանկ եղաւ տեղւոյս նախորդ գայմագամը, որուն միակ յանցանքն էր խաղալիք չ'ըլլալ աղաներուն ձեռքը:

Այս աղաներուն պաշտպանութեան տակ գտնուող քիւրդ ծառաները կրնան մեծ ու փոքր ոճիրներ գործել և հարստահարել անպաշտպան հայերը, առանց կառավարութեան պատժելու փոքրիկ կասկած մ'ունենալու: Մնացած քիւրդերը թէև մասամբ հնազանդ են կառավարութեան, բայց օրէնք-կանոն յարգող չեն և մեծ յանցանքներու համար շատ անգամ անպատիժ կը մնան: Կառավարութիւնը, որ գաղափար չունի արդարութեան, ճշմարտութեան և ուղղութեան վրայ՝ գրեթէ միշտ իր ականջները կը փակէ հայոց արդար բողոքներու ու դատերու դէմ: Սակայն աչքերն ու ականջները լայնօրէն կը բանայ, եթէ անոնց վրայով թեթև զրպարտութեան փսփսուկ մը լսէ: Ամէն ճիգ կը թափէ, ամէն տեսակ հալածանք կը գործադրէ, որպէս զի յեղափոխական փրկարար հոսանքը չծաւալի իր շրջանակին մէջն ալ:

Այս համառօտ տեղագրութիւնը հերիք սեպելով, անցնինք վերջին տարւոյն մէջ կատարուած սպանութիւնները, անթութիւնները և հարստահարութիւնները ցուցադրել թէ գաւառի և թէ շրջականերու մէջ կատարուած: Զանց կ'ընենք յիշատակել 1895-էն մինչև ներկայ տարւոյս սկիզբը կատարուածները, որոնց համար երկար պատում էջեր և ահագին աշխատութիւն հարկաւոր են:

Ս պ ա ն ն ու թ ի լ ն ն ե Ր. — Վիճակին գիւղերէն գրեթէ երկու ամուսն ժամանակամիջոցին մէջ սպանուած են՝ Քընենթէն 1, Գուշանէն 1, Հոտնօֆէն 1, Քըլիսիկէն 3, Տաւուսպէկէն 1 և Քաւարօէն 1 հայեր: Ասոնցմէ զատ՝ ճամբորդութեամբ գաւառէն անցնող ուրիշ գաւառացիներէն՝ սասունցի գործաւոր մը Մերտինէն դարձած ատեն տեղէն 1 ժամ հեռաւորութեամբ Գուլֆա գիւղին մօտ սպանուեցաւ: Հաղթոցի վաճառական մը Խաչատուր անունով Տիգրանակերտէն դարձած միջոցին տեղէն 1 ժամ հեռու Գուռէ-Նուազ կոչուած տեղը յարձակում կրեց Մալա-Շարաֆ աշերէթի հրոսախմբէն: Հայ վաճառականը սպանուեցաւ և իր ապրանքները 400 ոսկիի արժողութեամբ յափշտակեցան: Ուրիշ վաճառական մը, արարկերցի Մինաս անուն, Բաղէշէն տեղը գալու միջոցին՝ դարձեալ նոյն տեղը և նոյն հրոսախմբին ձեռքով սպանուեցաւ և իր ձին ու դրամները յափըջտակեցան: Այս անիծեալ տեղը, ուր յիշեալ երկու հայ վաճառականներ սպանուեցան, վերջերս ուրիշ հայու մը արիւնն ալ թափուեցաւ: Մալաքանցի ջորեպան մըն էր այս վերջինը, որ քսանի չափ քիւրդ ընկերներու հետ տեղէն տուն կը վերադառնար: Այդ վայրը հասած ատեն՝ քսանի մը արիւնկալ քիւրդեր վրան կը յարձակին և առանց դիմադրութիւն մը տեսնելու ընկերներէն ճամբայէն դուրս կը տանեն և դաշոյնի հարւածներուն տակ կը խողտողեն զայն, սոսկ անոր աղային դէմ ոխ ունենալուն համար: Այս կողմերը ամէն հայ իր աղան ունի, իբր թէ անկէ պաշտպանելու, բայց շատ անգամ պաշտպանելու փոխարէն անոր թշնամութիւնն ալ ինքը կը վճարէ իր կեանքին գնով: Եւ այսպիսի դէպքեր հազուադէպ չեն... Կառավարութիւնը ո՛չ մէկ փորձ կ'ընէ այդ անմեղ զոհերուն դահիճները ձեռքաւալելու և պատժելու. և կը շարժի միայն այն ատեն, երբ ուղղակի այդ հրոսախմբերը իր շահերուն սահմանին մէջ մտնեն:

Ն ա խ ա տ ի ն ք կ ր օ ն ի դ է մ և բ ո ն ի կ ր օ ն ա փ ո խ ու թ իւ ն . — Այս տարւայ սկզբէն մինչև հիմա գաւառէս իսլամացած են բունի կերպով 10 կիներ. Հաղբար գիւղէն 2, Գուլբգէն 1, Գուրգէն 1, և Պշիւրիկէն 6: Ասոնք մեր գիտցածներն են. ասոնցմէ զատ ո՞վ գիտէ քանի քանի աղջիկներ և էրիկ ունեցող կիներ բունի առած տարած, կրօնափոխ ըրած են:

Երկար ատենէ իվեր տեղս թափառական շէյխ մը կայ, զոր ժամանակաւ Տիգրանակերտի նախորդ վալին իր մօտ կը պահէր: Սա սովորութիւն ըրած է շուկայէն անցած միջոցին՝ խաչը անարգել և քրիստոնեայ քահանաները ծաղտել: Մահմադականաց 2 տարեկան լամուկներն անգամ, որոնց լեզուն նոր կը բացուի, հայուն, քրիստոնէին օրէնքն, կրօնքն ու խաչը հայհոյելուն մէջ մեծ հաճոյք կ'ունենան:

Թ ա լ ա ն . — Երկու ամիս կ'ընէր, որ տեղէս յուսահատ հեռացաւ մըզտինկցի Սիրո անուն հայ մը: Սա Հալէպէն վերադարձին գիւղաքաղաքին մօտ ոստիկանի մը կը հանդիպի, որ և անոր բոլոր ունեցածը՝ 100 մէճիդ կը յափշտակէ: Երկար ատեն խեղճը գնաց եկաւ կառավարութեան դուռը, վկաներով հաստատեց ոստիկանին ըրած յափշտակութիւնը, բայց զուր ջանք. չկրցաւ բան մը ձեռք ձգել. չմոռնանք ըսելու, ոստիկանը իր յափշտակութենէն խոշոր բաժին մը հանած էր գայմազամին:

Թալանի ամենացաւալի դէպքերէն մէկը Ղանի գաւառաբնակ 20-ի չափ հայերու թալանիլն էր, որ կատարուեցաւ անցածները: Այս խեղճ վանեցիկները իրենց պանդխտութիւնէ դառնալուն, Սղերդէն քիչ հեռու՝ Տառնիճէ-Թէլանի ըսած տեղը հասած միջոցնուն՝ քիւրդ աւազակախմբի մը կը հանդիպին, կը մերկացնին իրենց բոլոր ունեցածներէն: Սրտաձմիկ էր տեսնել թէ այս խեղճերը, որոնցմէ մէկը 4, մէկը 5, 6-7 երկար տարիներ իրենց հայրենիքէն հեռացած, արուն քրտինք թափած էին քիչ մը դրամ շահելու համար, ինչպէս կուլային մտածելով որ անօթի-տկլոզ պիտի դառնան իրենց տուները, ուր գաւակները հաց և անողորմ կառավարութիւնը տո՛ւրք պիտի աղաղակեն:

Ռաչգստան աշիրէթի ցեղապետներէն տարմակցի Հաճի Պապիկ աղայի տղան Ռասուլը մօտերս կը յափշտակէ քերըկցի հայու մը հինգ եղները, որ անոր ամբողջ հարստութիւնը կը կազմէին: Խեղճ հայը նկատելով որ ուրիշ կերպով անկարելի է յետ ստանալ իր տաւարները, կերթայ այդ բարբարոս մարդուն ոտը կ'իյնայ, կը պաշտի որ մեղքանայ իրեն. բարբարոս քիւրդը զիջում կը ցուցնէ, կը խոստանայ եղները ետ դարձունել, եթէ նա բերէ իրեն 12 մէճիտ: Ճարահատ հայը երկար ատեն հոս-հոն թափառելէն, դիմուճներ ընելէն վերջը կը յաղողի պահանջած գումարը ամիսը 24 տոկոսով փոխ առնել զինուորէ մը և կը տանէ յիշեալ բանաւորին: Բայց նա դրամներն առնելէ յետոյ կը վռնդէ զայն և տաւարները կը ծախէ ուրիշի մը: Այսպէս թշուառ հայը իր պիտերը ազատելու ջանքին մէջ մօրուսն ալ վրայ տուաւ:

Փերուկցի Հաճի Մահմուդ աղան ալ անցածները վերոյիշեալ գիւղը՝ Քերուկ երթալով կը սպառնայ, որ եթէ գիւղացիները իրեն 40 մէճիտ չվճարեն՝ սպանութիւն պիտի ընէ և արուն պիտի թափէ, ու կը հեռանայ: Քանի մը օր վերջ այս աղային և ուրիշ ցեղի մը մէջ կուի պատահելով՝ աղային մարդոցմէ մին կը սպաննուի: Քերուկի ռէյսը մէկ քանի ընկերներով ցաւակցութեան

կերթան աղային մօտ: Մահմուդ աղան զանոնք տեսածին պէս՝ կը հարցնէ թէ ի՞նչ գործով իր տունը եկած են. արդեօք պահանջած 40 մէճիտը բերած են թէ ոչ: Ռէյսը կը յայտնէ թէ ցաւակցութեան համար եկած են և 5 մէճիտ տալով կը պաշտի որ աւելի բան մը չպահանջէ, վասն զի գիւղացիները շատ խեղճ են: Անգութ աղան 5 մէճիտը նետելով անոնց երեսին կը պոռայ. «Եթէ մէկ-երկու օր ետքը պահանջուած գումարը չբերէք, գիտցած եղէք ձեր գլուխները կերթան»: Ռէյսը և գիւղացիք տուն դառնալով ամբողջ գիւղացոց հետ կը ջանան 1 մէճիտի համար ամսական 22 տոկոս վճարելով՝ 15 մէճիտ ալ փոխ առնել զինուորէ մը և անմիջապէս Մահմուդ փաշային երթալ խնդրելով որ մնացած 20 մէճիտի համար բարեհաճի քանի մը օր պայմանաժամ տար:

Խըսարգան աշիրէթին ցեղապետը՝ Խալիլ աղան, իր սովորութեան համաձայն, այս ամսուս ալ դաշտի հայաբնակ գիւղերը կը շօջի և կը ստիպէ ամենախեղճ ընտանիքներուն անգամ արտերու մէջ իրենց ժողոված հացերու արդիւնքն իսկ ծախել, դրամի վերածել և իրեն յանձնել՝ յայտնելով որ այս տարի ցորենի տեղ դրամ կուղէ: Խեղճ հայերու համար սուլթանէն զատ քանի հարկապահանջներ ալ կան:

Ճ ո Ր Օ Շ Ա Կ Ե Ն Լ Ե Ա Լ Ա Մ Ա Կ Ա Ն Դ Ր Օ Լ Թ Ե Ա Ն Հ Ա Ս Մ Ա Ռ Օ Լ : — Ինչպէս ըսինք մեր նախաբանին մէջ, այն 50-ի չափ հայաբնակ գիւղերը, որոնք դաշտին մէջ կը գտնուին, ժամանակաւ հայոց սեփականութիւնն էր. իւրաքանչիւր հայ իր հողի, իր տան տէրն էր: Հիմա ասոնք աղաներուն ու պէյերուն կը պատկանին. խեղճ հայերը կը մշակեն, կը բանին, կը դատին, բայց արդիւնքի շատ փոքր մաս մը իրենց բաժին կը մնայ և մնացած ամբողջը աղաներուն կերթայ: Տակաւին կային քանի մը գիւղեր, որոնք գիւղացոց կը պատկանէին, բայց անոնք ալ յափշտակեցան վերջերս: Տեղույս աղաներէն մէկը՝ Սագուն աղան՝ Թըրպլսթի գիւղը գրաւելու համար, սկսաւ գաղտնաբար գողեր և ասպատակներ ղզկել, գիւղացիները նեղելու և անոնց ունեցածները աւերելու: Գիւղացիք կառավարութեան դիմեցին և քանի մը զօրք խնդրեցին իրենց պաշտպանութեան և ապահովութեան համար, բայց շուտով զղջացին տեսնելով որ իրենց ապահովութեան և հանգըստութեան համար եկած զօրքերը աւելի շատ նեղութիւն կը պատճառէին: Ճարահատած և փրկութեան ուրիշ ելք չգտնելով՝ ուղղակի դիմեցին Սատուն աղային՝ գիտնալով որ իրենց գլխուն եկած ամբողջ չարեաց սկզբնապատճառը այն էր և խնդրեցին անկէ, որ ինքը տէր ըլլայ գիւղին և ասպատակներու յարձակումներէ պաշտպանէ զայն. իսկ իրենք իբրև ստրուկ մշակեն այդ հողերը և ապրին: Այսպէս յիշեալ աղան տէր եղաւ Թըրպլսթի գիւղին: Ստորգ պէյն ալ այս եղանակաւ քրաւեց Վունտէճանօ գիւղը, որու կտրիճները երկար ատեն իրար զիրար պաշտպանեցին և կուեցան քիւրդ հրոսախմբերու հետ, բայց իվերջոյ ընկճեցան: Գաղանաբարոյ և անխիղճ աղան, իր յափշտակած գիւղերէն մէկուն մէջ քեղեցիկ տուն մը շինած է և երբ ամէն անգամ հոն կերթայ՝ աղբիւր գացող և դարձող հայ կիները բունի իր մօտ բերել կուտայ...

Ա Լ Ե Ր Օ Լ : — Գոճոն գիւղը, որ մինչև օգոստոսի սկիզբները հայաբնակ էր և շէն, հիմա աւերակ դարձած է: Ռաճապան աշիրէթի ցեղապետը՝ Միրզա աղան՝ այս

գիւղն իր կալածանքներու վրայ աւելցնելու համար, բնակիչները երկար ատեն նեղելէ վերջ 15 օր առաջ իր որդին խուճար մը մարդով ղրկեց հոն, գիւղացոց սպանակալու: Այս բարբարոս քիւրդեր գիշերը այս գիւղը հասնելով՝ ուէյս Մատրոսը կը շրջապատեն և բարձր ձայնով կ'անարգեն անոր կինը, հաւատքը, խաչը և կը հրամայեն իրենց ըսածներուն «ամէն» ըսէ: Ռէյսը իր անձը շատ նեղելէն և իր կեանքին վտանգ տեսնելով՝ անկարող կըլլայ բաւ մը արտասանելու: Նոյն միջոցին Պողոս անունով երիտասարդ մը, որ հոն կը գտնուէր, չկրնալով հանդուրժել կ'ըսէ անոնց. «բարեկամներ, ինչ կայ որ այդպէս կատղեր էք, ձեր ըրածը լաւ բան էք, չե վայրէջք... Գեւ. խօսքը չըրացուցած՝ քրդերը վրայ կը հասնին և չարաչար կը ծեծեն: Ռէյս Մատրոս այս խառնաշփոթութենէն օգտուելով, միջոց կը գտնէ փախ-

չելու: Յաջորդ օրը գիւղացիք կը թողնեն իրենց սուներն ու ունեցածները և կը փախչին, կը հեռանան գիւղէն: Իսկ քրդերը սուները մտնելով գառածին կ'առնեն կը տանին, մինչև անգամ՝ սուներու դռներն ալ Հիմա գիւղը ամառի է, խրճիթները կիսաքանդ, հոնձրերը կաւերուն մէջ երեսի վրայ մնացած: Թիւրք կառավարութիւնը փոխանակ գիւղի աւերման պատճառ եղողները գտնելու և պատժելու՝ գիւղի տէրտէրը և ուրիշ քանի մը մարդիկ բռնելով կը բանտարկէ և կը պահանջէ որ իրենց տեղերը վերագառնան: Կառավարութիւնն ալ կը մտածէ որ գիւղին աւերակ մնալովը կրնայ ղրկել տուրքերէ, բայց երբեք չի մտածեր, որ գիւղը, գիւղացին պաշտպանելն ալ իր պարտքն է...  
Ահա նփրկերտի և անոր շրջակայ հայութեան ամփոփ ու իսկական պատկերը:

Տ Ե Ղ Ե Կ Ա Պ Ի Բ

ՏՈՒՐԱՆԱԿԵՐՈՒ ՎՈՒՍԱԿԱԼՈՒԹՅԱՆ ԺՈՋՈՂ ԳԱՆԱՌԱԿԻՆ ՆԵՐՔԻՆ ՂԻՃԱԿԻՆ ՂԵՐԱԲԵՐԵԱԼ

(Պատճէն, թիւրքերէնէ թարգմանած)

(Շարունակութիւն N° 1-ի)

Ս Ա Ր Ս Ա Փ

Այդ և ատկէ առաջ թէ կառավարութեան և թէ ժողովուրդին կողմէ ինչպիսի (Մարտինի) և վիլայէթին (Տիգրանակերտ) տրւած բազմաթիւ հեռագիրները և աղերսագրերը Մուսթաֆա փաշայի ազդեցութեան դէմ ունէ օգուտ մը չեն տւած, ընդհանրապէս Միւթէսարըֆ Բաթիֆ էֆէնտին տեղական գործերը խառնակ ու շփոթ վիճակի մը ձգելով Մարտին մեկնելէ յետոյ, փաշան հոկտեմբեր 27-ին Սէլուփի համայնքին մէջ գտնուող աշիւթներու վրայ շատ մը ձիաւորներ ղրկելով անոնց ձեռքով 2500 ոչխարները կը յափշտակէ և 3 հոգի ալ կը մեռնեն: Ճիշդ նոյն թւականին՝ Ճիզրէի 20-30 մասվաճառներէն 4-5-ական մէճիտիյէ տուգանք կ'առնէ: Հոկտ. 28-ին Պաթիւան աշիւթէն անորոշ քանակութեամբ ջորիներ և էշեր կը կողոպտէ: Նոյ. 12-ին մարթինով զինուած 200 ձիաւոր և 400 հետեակներ ղրկելով Սէլուփի նահիյէի Հուրի աշիւթին վրայ յարձակել կուտայ, որոնք սոյն աշիւթէն 80 հոգի սպաննելէ, 32 հոգի վիրաւորելէ և 30 հոգի ալ Հիզը գետին մէջ խեղդամահ ընելէ վերջ՝ 700 ձի, 900 ջորի, եղ, էշ և 8,000 ալ ոչխարնին աւար կ'առնեն և ուրիշ գոյքերն ալ կը թաղնեն: Այս ցաւալի և ծանրակշիռ դէպքերու մասին այն ատեն կատարւած քննութեան վրայ բռնւած արձանագրութիւններ և պաշտօնական թուղթեր՝ Չախօ գազանի իտարէ և դատարանական մարմիններու կողմէն Մուսուլի նահանգին և Ճիզրէէն պաշտօնով ղրկւած քովիսէր, ոստիկաններ և բաղաբապտուութեան բժշկի և նահիյէի միւտիլի կողմէն ալ Ճիզրէի իշխանութեանց հաղորդւած են:

Սէլուփի նահիյէի ժողովուրդը համոզելով թէ այդ հարստահարութիւններէ և կեղեքումներէ ուրիշ կերպ ազատել կարելի չէ՝ հպատակութիւն յայտնեցին փաշային, և ահա Ճիշդ նոյն թւականներուն կը հանդիպէր որ թահսիլաթի համար Սէլուփի նահիյէն 20 ոստիկաններով ղրկւած միւլաղիմ (յիսնապետ) Մէհմէտ աղան Մուսթաֆա փաշայի թելադրութեամբ Սէլուփիի աղաներու կողմէն կը սպաննուէր և դիակը վայրագօրէն

կտոր-կտոր ջարդուելով եզիդիներու գերեզմանատունը կը փոխադրուէր:

Փաշային օրէնքի և արդարութեան հակառակ այսչափ գործերուն գլխաւոր նպատակը՝ ժողովուրդը անպայման իրեն հպատակելու բռնադատել, իր փեսան Թահիր և նորա եղբայրը Փաթիթահ աղաներուն վերագառնալը ապահովելու համար կառավարութիւնը զբաղեցնել և անոր սարսափ աղբիւր եղած էր, և իրօք ալ այդ միջոցներով նպատակին վերջապէս հասնելով Տիգրանակերտէն ազատեցան և Ճիզրէ վերագարձան: Ղերագառնալէն անմիջապէս յետոյ, յիշեալ աղաները Տէճէլ գետին անդի կողմը գտնուող աշիւթներուն ցորենի վաճառու մը խտրարդիլեցին: Եւ քանի որ այդ արգելքը Բամաղան ամուն մէջ կը դուրէր, Շաֆիի կրօնքին պատկանող նոյն աշիւթներու կնիկները, երբ Ճիզրէէն Փըթրէ տալու համար ցորեն դնած կերթային, Թահիր աղայի կողմէն կամուրջի գլխուն մասնաւորապէս դրւած պահստիներու կողմէն ցորենները ոտնակոխ կըլլան և այդ կերպով հաղարաւոր միւսլիմանները առանց Փըթրէ տալու պարամ ընելու կը հարկադրուին: Նոյն աշիւթէն Ճիզրէ գալու յանդրգնողները անպաղար ծեծւեցան և չարչարեցան:

Ասկէ վերջն ալ Ճիզրէի Հաճը Ապտիլլահսամ էֆ. 10 հազար ղուրուշնոց բարդի ծառերը ամբողջ կտրել տւած է: Անսարի շառաւիղէն սերած շէյխ Մէհմէտ էֆէնտինի կալածքները և արտերը գրաւելով խեղճ մարդը գիշերօք Մարտին փախուցած է: Ճիզրէի Ալի-Խալիֆին 50 հազար ղուրուշ արժողութեամբ մէկ տունը և Հաճը Ապտիլլահսամ և Հասան Ահմէդ աղաները և փաստաբան Մէհմէտ-Ալի էֆէնտին և գազաի ուրիշ երեւելիները իրենց շատ մը կալածները և գոյքերը Թահիր աղային կողոպտիչ ձեռքը ձգելու հարկադրւած, իրենք ալ Տիգրանակերտէն փախան: Միւթի էֆէնտինի եղբայրը Մուսթաֆա էֆէնտին Մուսուլ ապաստանեցաւ: Խարբերդի Ռէճէպ աղային 30 հազար ղուրուշ արժողութեամբ մէկ տունը, որ երկրագործական պանքային պարտքին փոխարէն գրաւ դրած էր, աղային անւան

անցաւ և դեռ շատ մը մարդիկ մինակ հոգինն ազատելու համար, ընտանիքներն առնելով ուրիշ վայրեր փոխադրւելով հաստատուելու ստիպւեցան: Իսկ մնացեալ աղքատ դասակարգն ալ փախչելու առիթ կամ կարողութիւն չունենալով, ոմանք ստրկօրէն աղային ծառայելու համակերպած և ոմանք ալ իրենց ձեռքը մնացած կալուածներ կամ գոյքեր կան, զանոնք ալ իրենց ձեռքը մէյ մէկ փոխառութիւններ նկատելով իբր փրկանք կամ վարձք իրենց ինչքով և կեանքով անձնատուր եղած են:

Այս անպայման համակերպութեան և անձնագրութեան վրայ Թահիր աղան, որուն ամէն մի ընթացքը ու արարքը Գուրանի սրբազան տրամադրութիւններու հակառակ և որու խառնածքն ալ անգթութեամբ շողախած է, առանց երբէք ըրածներուն հետևանքները կշռելու և բռնակալութեան վախճանը մտածելու քանի որ կառավարական պաշտօնեաներն ալ իր բռնակալ ճիրաններուն մէջը առած ըլլալով, անոնք ալ իր արարքներու մասին պէտք եղած տեղերու հետ հաղորդակցութեան մտնելու անկարող վիճակի մը մատնուած էին, ալ սկսած էր առանց մէկէ մը քաշելու իր տան մէջ դատարաններ կազմելու, իր սեփական բանտին մէջ ժողովուրդը բանտարկելու ու կապելու, և իհարկին քստորելու կամ տուգանքի դատապարտելու:

Ի միջի այլոց իսլամներէն և Գալեա թաղէն Ապտի Հիւսամին Վերջերէն գիւղին մէջ ունեցած 30 հազար զուրուշ արժողութեամբ արմտիքը և երկրագործութեան յատուկ կենդանիները և գործիքները, արտերը և մատակ ձիերը, Հաճը Հաֆըզի որդի Մէհմէտի 5 հազար զուրուշնոց Տիրէք Սահգու գիւղին մէջ գտնուող արմտիքը յափշտակելէ յետոյ, զայն Մուսթաֆա փաշայի վրանին տակ 3 օր կապած և չարչրկած և վերջն ալ 4 ժաման միջոցին վճարելու պայմանաւ 100 մէճիտ փրկանք բերելու համար անիկայ արձկած է և երբ խեղճը փրկանքը ձարելու համար հոս հոն կը վազվզէր՝ պայմանաժամուն կէս ժամէ իվեր արդէն լրացած ըլլալը պատրակելով 50 մէճիտ ևս բարդելով 150 մէճիտը, անոր յօրեղբայր Հաճը Ահմետ Ապտիւրահմանի ալ նոյն օրը խտարէի ժողովի և գազայի ուրիշ երևելիներու և գայմագամ խարբերդցի Իպրահիմ պէկին աչքերուն առջև 120 մէճիտիէն, Միր Ալի թաղէն Հաճըի որդի Մէհմէտ Մէմունը մտրակի 50 հարւածներով չարչրկելէ յետոյ 10 ոսկին և մէկ ժամացոյցը, մարգարէի ցեղէն Սէյիիտ Ալիին մէկ ձին և մշակութեան վերաբերեալ գործիքները, և պատրաստ բոլոր դրամները, Հաճը Հիւսէյն Գահրիին մէկ մատակը և ցանելու յատուկ սերմը, Հաճը Էօմէրի ձիգրէի շրջականները գտնուող ամբողջ վարելահողը և մաս մը անասունները և պատրաստ դրամը կողոպտած է, Թուր թաղեցի Համմի Խալէֆ աղային ձիգրէի յօտերը եղող հողերը, որոնք երկրագործական պանգաին գրաւ դրած էին, առանց պաշտօնական գործողութիւններու թափօի քարտուղար Սէյիիտ Սաֆտէրիի ձու իր վրայ փոխանցելով թէ անոր որբերը վնասելէ զատ վախճանեալին թողած 30 հազար զուրուշ արժողութեամբ հարստութիւնը իւրացնելով որբերուն փողոցներու մէջ մուրալուն պատճառ դարձած է: Էմին Սահօին երկրագործական պանգին գրաւ դրած 7-8 արտերը, նորացորները, երկրագործութեան յատուկ կենդանիները և գործիքները բռնութեամբ յափշտակելով, անոնց վրայ պանգին ունեցած պահանջը բացը թողած է: Մուսուլցի

Իէզօ Չէլէպիին կնկանը 100 ոսկինոց ոսկի մանեակը և Լիսան բնակիչներէն ձիգրէի մէջ հաստատուած Սէյիիտ Մէհմէտի մահաւմբը անոր 20 հազար զուրուշ արժողութեամբ գոյքերը և պատրաստ դրամները յափշտակելով խեղճ որբերն ալ ձիգրէին վնասած է:

Հին ասորի ազգէն վաճառական Մագտէսի Սիւլէյմանի մէկ տարւան ընթացքին մէջ 500 մէճիտիէ և ուրիշ մետաքսեայ թանկագին կերպանները, նոյն ժողովուրդէն Պուլթուս Շիմնի Բարսան գիւղի մէջ 10 հազար զուրուշնոց երկրագործ, գործիքները, սերմը, կենդանիները և վարելահողերը, ձիգրէի այժմու սանտրգ էմին Ապտիւրահէտ և Մթրան Եագուգ էֆէնտիներու 50 հազար զուրուշ արժողութեամբ Ամրին գիւղի բոլոր հողերը և ամբարները, նոյն գիւղի բնակիչներէն 1200 ոչխարները, և Հանուշ Արսէնի մահաւմբը անոր ձգած բոլոր շարժուն ու անշարժ կալուածները յափշտակած ըլլալով, վտխճանեալին կինը և տղաքները մուրալով մինչև Երուսաղէմ գացած են: Յիշեալ ժողովուրդի ուրիշ դասակարգէն ալ մէյմէկ պատրակներով 3600 զուրուշ շորթած է \*):

Միւս քրիստոնեայ և հրէայ ազգերն ալ իրենց կարգին նմանօրինակ բռնութիւններու և հարստահարութիւններու ենթարկւելով, գոյքերը և դրամները կողոպտուած են. թէպէտ և վնասուած ժողովուրդին անւամբ յիշատակութիւնը և կրած վնասներուն քանակութիւնը կարելի չէ եղած ճշդել, բայց վերոյիշեալ մանրամասնութիւններով կարելի պիտի ըլլայ անոնց վնասներն ու տառապանքներու վրայ գաղափար մը կազմել:

Այդ վատութիւններու ականատես եղող ձիգրէի նամակատուն և հեռագրական նախկին պաշտօնեայ Հիլմի էֆէնտի, որ իր բնածին պարկեշտութեան և ուղղամտութեան դիզումով, անցած-դարձաներու մասին տեղեկութիւններ կը հաղորդէր ուր որ անկ է, երբ Թահիր աղան եղելութիւնը կ'իմանայ գիշեր ատեն հեռագրատունը իր ծառաներէն մի քանին լռկելով, որոնք անոր տիկնոջը յատուկ սենեակին պատուհանը կտորելով ներս կը մտնեն և 5 հազար զուրուշ արժողութեամբ 5-նոց ոսկիները և ախուռէն ալ 30 ոսկինոց ձին կը յափշտակեն: Հիլմի էֆէնտին եղելութիւնը կուսակալութեան կը յայտնէ և կը բողոքէ: Ատոր վրայ միւլազիմ (յիսնապետ) Բիզա էֆէնտին հրամանին տակ բաւականաչափ զինուորներու հսկողութեամբ յիշեալ էֆէնտին ձիգրէին դուրս հանելով ազատեցին:

(Կը շարունակուի)

\*) Հնդկանքը հայերու և հրէաներու կրած անիրաւութիւններու և զրկանքներու մանրամասնութիւնները զանց առած է. մասնաւորապէս քաղաքացիներու վարդապետ Մթրան Եագուպին կրած կորուստները, որոնք անթիւ են: ԹԱՐԳՄԱՆԻԶ

Տ Ե Ղ Ե Կ Ա Գ Ի Բ Բ Ա Ղ Է Շ Ի  
(Շարունակութիւն № 2-ի)

1 դեկտեմբեր, 1902

Ահա կը լսենք որ Կիւզէլտէրէի (Երկվարք) Անտ գիւղի մէջ ալ Ասլօ և Գասպար անուն հայերը սպաննուած են Սլօխկի կոչուած աշիրէթէն, որոնք իրենց ոչխարները կը հսկեն եղբր: Մանրամասնութիւնները դեռ կը պակսին: Հայ ժողովուրդի գոյութիւնը պահպանող զլխաւոր գործօններէն մին անոր հայրենական հողն էր. այսօր

զրկած է վերջնականապէս անկէ ար: Եթէ տակաւին կը գտնուին այնպիսի խուլ անկիւններ, որոնք աննկատելի մնացած են իսլամի բարբարոս աչքերէն, այսօր ամբողջ ուշագրութիւնները լարւած է այդ կէտերու վրայ:

Ահա նմոշ մը. Ախլամ գաւառի Ջրհոր գիւղացիք, ինչպէս նաև ամբողջ գաւառի հայերը, շարունակաբար թալանւած ու յետին ծայր չքաւորութեան ժամանակ են 1895-ի ահաբեկութեան իվեր: Ջրհորցիները ճարահատ մնացած՝ կը դիմեն կառավարութեան և իրենց հողերը գրաւ դնելով՝ բանկայէն կը վերցնեն մասնաւոր և աննշան գումարներ, այն համեմատութեամբ, որ հարիւր ոսկի արժէք ունեցող կալւածի մը համար տրւած է ամենաշատը 10-15 ոսկի: Նոյնը կատարւած է նաև ուրիշ շատ մը հայ գիւղերու կողմէ: Չմոռնանք ըսելու, որ բան կը երկրագործի աշխատուածիւնն ու հողը պաշտպանող կառավարական պաշտօնէն առանձին է, գոնէ Թիւրքիոյ ըսելով:

Օրինական պայմանաժամ դեռ չըրացած, առանց յայտնելու տէրերուն, աճուրդի կը հանեն հողերը և շատ անգամ ալ համաձայնած թիւրք աղայի մը կամ էֆէնտիի մը հետ կը ծախեն առանց աճուրդի դնելու: Այս վերջին ձևով տարիէ մը ի վեր ծախւած է Ջրհոր գիւղացի ուէս Շաքրոյի և դրացիներու հողերը բաղէջցի Սատէ աղա անուն թիւրքին: Խեղճ գիւղացիք իրողութիւնը հասկընալուն պէս դիմեցին կառավարութեան՝ բողոքեցին, ճշտեցին, լացին: Լսող մը բնաւ չգտնեցաւ: Հարիւրաւոր հեռագիրներ թափեցին պատիարքարան, Բ. Գուռ և այլուր: Ծախեցին իրենց միակ յոյս եղող մէկ-մէկ զոյգ եղներն ալ, ծախեցին կառավարութեան դռները մաշելով, սակայն կրկին անլուծելի մնաց: Սոյն վիճակին ենթարկւած են Խըմպէլընը գիւղացիքն ալ, որոնք կորսնցուցին ունեցածներուն հետ՝ իրենց միակ ապաւէն հողերն ալ:

Հաւաստի աղբիւրէ կը տեղեկանանք որ Բաղէջի կուսակալը հրաւիրելով քաղաքի թիւրք երևելիները, կ'առաջարկէ կնքել հանրագրութիւն մը ուղղեալ սուլթանին, թէ «հայկական նահանգների համար Եւրոպայի կողմէ տրւած ծրագիրը չենք ընդունիր, եթէ դուք ալ ընդունիք, ի գործ պիտի դնենք այն՝ ինչ որ պակաս մնացած է 1895 և 96-ի թւականներուն»:

Այսօր ալ կը լսենք որ Բաղէջի թիւրք և հայ վաճառական դասակարգը հանրագիր մը կը մատուցանէ տեղույս կուսակալին, խնդրելով որ քրդերու արարքները զսպելն, տիրող անկարգութիւնը վերցւի, կողոպտւած վաճառականական ապրանքները ետ առնելն, շեշտելով միանգամայն, որ պաշարման դրութիւն մը կը ներկայացնեն՝ ոչ դրսէն կրնան ապրանք ստանալ, և ոչ ներսէն կարաւան ձաժայ հանել: Պարզ է թէ հայերը չեն համարձակիր և իրաւունք ալ չունին այդպիսի յանդուգն ձեռնարկ մը կատարել և ներկայանալ կուսակալին: Թիւրքերը կը ներկայացնեն, կուսակալը կրակ կտրած կը հարցնէ. «որ աշիւթն է, որ համբիդիէն է». «ամէնքն ալ, որն որ ճարպիկ գտնեցաւ և շուտ կանխեց», կը պատասխանեն: «Գնացէք հանդարտ եղէք, երկրորդ անգամ այս կերպ գիմուսները չ'ընէք, հակառակ է պետական շահերուն», կ'ըսէ կուսակալը ու կը վերջացնէ:

Ահա կարուկ ու կարճ պատասխան հայոց վշտերուն...

Ք Ա Ղ Ա Ք Ա Կ Ա Ն Տ Ե Ս Ո Ւ Թ Ի Ի Ն

Մ Ա Կ Ե Դ Օ Ն Ի Ա Յ Ո Ւ Մ

Չնայած ոռոս-ուստրիական ընդհանուր լուսն, գրութիւնը Մակեդոնիայում մնում է անորոշ ու տաքնապալից:

Մակեդոնական ներքին կազմակերպութիւնը միացած Սարաֆօվի կուսակցութեան հետ՝ օրէջօր լայնացնում է իր գործունէութիւնը. — Սանեվի, Գավիգօվի, Սարաֆօվի, Թոմա սարկաւագի, Չիկլարօվի և ուրիշ օր աւուր սուււրացող խմբեր, իւրաքանչիւրը բաղկացած մի քանի տասնեակ հոգուց՝ գրեթէ անընդհատ յարձակումներ են գործում թիւրքերի վրայ, ուժանակով քանդում են երկաթուղու կամուրջներ, պետութեան զօրանոցներ ու պահեստներ, կտրտում են հեռագրական թելեր և այլն: Բալկանների ֆէդայիները հրաւիրում ու տեղ-տեղ ստիպում են միանալ իրենց հետ բոլորին և տուրք են դնում երկրում ապրող հարուստների վրայ:

Թիւրքաց 100 հազարաւոր բանակը միացած բաշիրօղուկների հետ՝ կատարում է անվերջ խուզարկութիւններ բունաբարութիւններ և այդպիսով աւելի ևս սոււարացնում դժգոհների բանակը. ընկածների տեղը բռնում են նորերը, վաղաժամ նահատակւած առաջնորդներին փոխարինում են բուլղարական դասալիք օֆիցէրներ:

Հեշտ չէ մակեդոնական խնդրի լուծումը. խոչընդոտ տարրերն այժմ աւելանում է մի նորը ևս. սուլթանը իր ձեռագիր նամակի հետ միասին յատուկ դեսպանութիւն է ուղարկում Յունաստան՝ Գէորգ Թագաւորին Իֆթիխարի բարձր շքանշանը շնորհելու: Թագաւորը ընդունում է գոհունակութեամբ և նպաստաւոր պայմաններով առևտրական դաշինք է կապում Թիւրքիայի հետ... Մակեդոնացիների դեմ կուելու համար, յոյները մտնում են թրքական բանակը...

Ոչ պակաս կարևոր են Ալբանիայում կատարուող խռովութիւնները: Ի պատասխան Մակեդոնիայի համար մշակւած բարենորոգումներին և ալբանացիներին զինաթափ անելու պահանջին — հաւանօրէն Վ. Պոլսի գուցէ և Վիեննայի գիտութեամբ — մարտի սկզբներին Սենեկում գումարւած արնաուտների ժողովը յայտարարում է, որ նրանք դէմ են քրիստոնեաների ընդունելուն տեղական ժողովների մէջ, որ նրանք բողոքում են ոռու և այլ հուպատոսների հաստատման Միտրօվիցայում, որ իրենց զէնքը նրանք կը յանձնեն միայն արեան գնով և այլն: Այս սպառնալիքները չմնացին պարապ խօսքեր: Մարտի վերջերում հետևակ ալբանացիներ պաշարում են սերբիաբնակ Միտրօվիցան և բալկանների քիւրդերին յաջողում է յետ մղել միայն թնդանութների ուժով կանոնաւոր թիւրք զօրքի միջամտութեամբ. կրքերը աւելի ևս բողբուում են միւս օրը, երբ մի ալբանացի զինուոր զարկում է նոր հաստատւած ոռուական հիւպատոսին, որը մի քանի օրից վախճանում է:

Վ. Պոլսոյ ոռուաց դեսպանը իր միւս պաշտօնակիցների հետ ազուր յորդորներ է ուղղում սուլթանին զսպելու, ալբանացիներին, ճնշելու մակեդոնական ապստամբ չեռաներին, մտցնելով դրա հետ միասին նախագծւած բարենորոգումները: Մակեդոնիայում գտնուող ցարի հիւպատոսները յորդորում են քրիստոնեաներին խաղաղ մնալ, չմասնակցել շարժման: Ռուս կառավարութիւնը,



ըստ երևոյթին, տրամադիր չէ այլևս արևն թափել բախանեան սլալօնների համար: Պետերբուրգում երկիւղ են կրում, մի գուցէ Աւստրիան դէպի հարաւ արշաւէ, ուստի և ուսս գիււնագետները ճիգ են թափում: որ շարժումը չընդարձակի և պատերազմ չծագի Բալկաններում: Նրանք զօրեղ ճնշում են գործ դնում, որ Բուլղարիան չմիջամտէ յօգուտ Մակեդոնիայի: Ընորհիւ այդ ճնշման Գանեպի հրաժարական տւած մինիստրութիւնը նորից հաստատւեց Բուլղարիա, Պապրիկօվի տեղ զնւորական մինիստր ունենալով Սափօվին, որ նոյնպէս մակեդոնական դատի ջերմ համակրող է:

Մակեդոնիայի գլխաւոր կառավարիչ Հիլմի փաշան կորցրել է գլուխը: Նա չի կարողանում իրագործել յայտարարւած ընթացքների նոյնիսկ ամենաթեթեւ մասը՝ բանտարկեալների ազատութիւնը, քանի որ ազատւածների մի մասը միանում է ապստամբներին:

Հայդուկային խմբերի օրէցօր սաստկացող գործունէութիւնը, բուլղար կառավարութեան չկամութիւնը կամ անկարողութիւնը՝ փակելու սահմանները և արգելելու բազմաթիւ համակրողների անցքը դէպի Մակեդոնիա, և վերջապէս ազգաբնակչութեան ծանր վիճակը, — այդ բոլորը անհնարին է դարձնում թէ մակեդոնացիներին և թէ Եւրոպային՝ բաւականանալ ծրագրւած ընթացքներով:

Միւս կողմից ալբանացիների, յոյների դիմադրութիւնը, Ռուսաստանի, Աւստրիայի և Թիւրքիայի դիւանագիտական խաղերը դժուարացնում են աւելի դրական ընթացքների իրագործումը: Եւրոպական «կօնցերտը» դարձեալ կաղում է...

Ալիշէյմ սուլթանին այցելութեան է ուղարկում իր անդրանիկ որդուն, թագաժառանգին, Ֆրանսիան հասկացնում է ռուս-աւստրիական ծրագրի անբաւարարութիւնը, Անգլիան մտածում է, իր օֆիցերներին զրկել թիւրքաց զօրքի հետ, որպէս զի բռնաբարութիւններին սահման դրել Մակեդոնիայում... Այսպէս, քանի գնում աւելի խճճուում է դրութիւնը, քանի գնում, աւելի ակներև է դառնում, որ Մակեդոնիայի խաղաղացման համար անհրաժեշտ է եւրոպական հսկողութիւն:

**Է. ԲԵՐՆՇՏԱՅՆԻ ՀԱՐՅԱՊՆԴՈՒՄԸ  
ԳԵՐՄԱՆԱԿԱՆ ՌԱՅԻՍԱԳՈՒՄ**

Մարտի 20-ին, Ռայխստագին նիստում, սօցիալիստ պատգամաւոր Բերնշտայն արտասանեց նշանաւոր բառերական մի ճառ, որ նւիրւած էր գլխաւորապէս արևելեան հարցին և Բերլինի կօնգրէսի այն կէտերի իրագործման, որոնք վերաբերում են Մակեդոնիային, Հայաստանին և Ռուսաստանի հրէաներին:

Բերնշտայն համաձայն չէ կանցլէր Բիւլօվի հետ, որ սուլթանի կողմից ընդունւած ռուս-աւստրիական բարենորոգումների նախագիծը կարելի է համարել բաւարար Նա չի հերքում, որ նախագիծ ընթացքները իրագործման դէպքում առաջ կը բերեն զգալի բարելաւում մանաւանդ հարկահանութեան մէջ, ուր կամայականութիւններն ու վայրագութիւնները արգելք են հանդիսանում նախաձեռնութեան և կործանում երկրի արդիւնաբերութեան ամենակարեւոր ճիւղը —

երկրագործութիւնը: Բերնշտայն սակայն չի հաւատում, որ իրագործւեն նոյնիսկ այդ համեստ ընթացքները: Նրա ասելով միմիայն լայն բարեփոխութիւնները, և այն էլ եւրոպական հսկողութեան տակ, կարող են բաւարարութիւն տալ ճնշւած ազգերի կարիքներին: Այդ ընթացքները չպէտք է ուղղւած լինեն թիւրք ազգի դէմ, որին ատենախօսը իր համախոհների հետ միասին շատ համակրում է: Իր կուսակիցները չեն ցանկանում նմանապէս Թիւրքիայի բաժանումը, քանի որ Ռուսաստանը այդ դէպքում կը ստանար առիւծի բաժին, մի բան, որ հակառակ է թէ ռամկավարութեան շահերին Եւրոպայում, և թէ գերմանական ազգի շահերին: Ալբանացիները մի թէ կարելի է հաւատալ, որ յայտարարւած ընթացքները բաւարարութիւն կը տան մակեդոնացի յեղափոխականներին:

Սակայն ատենախօսը չի ուզում ծանրանալ մակեդոնական հարցի վրայ: Ալբընիս իր ընթացքի մէջ է և մօտ ապագան ցոյց կը տայ, արդեօք նա կը խաղաղի թէ ոչ: Բացասական դէպքում անկարելի է ենթադրել, որ հարցի զեկը մնայ միմիայն Ռուսաստանի և Աւստրիայի ձեռքում և որ չիսօսէ ամբողջ Եւրոպան: Իսկ այդ պարագայում կան պետութիւններ, ինչպէս Ֆրանսիան, որոնք չեն փնտրում այլևայլ շահեր Արևելքում և որոնք համակրանք են տածում դէպի ճնշւած ազգութիւնների ազատագրական ձգտումները: Անհրաժեշտ կը լինի, որ պետութիւնները միջամտեն և մշակեն բարենորոգումների մի նոր ծրագիր, որը վերջապէս ստեղծէր մի նոր և հաստատ կացութիւն: Անհրաժեշտ է, որ Գերմանիան գործէ այս ուղղութեամբ և չբաւականանայ կիսատ միջոցներով, որը առիթ կը տայ ուրիշներին պղտոր ջրում ձուկ որսալ: Գերմանիան պիտի կողմնակից հանդիսանայ լայն ընթացքների:

«Համեմատեցէք պարոններ, շարունակեց Բերնշտայն, Թիւրքահայաստանի դրութիւնը Բերլինի դաշնագրի 61-րդ յօդուածի հետ.

«Բ. Դուք պարտաւորուում է՝ անյապաղ իրագործել հայաբնակ դաւառներում այն բարենորոգումներն ու ընթացքները, որ պահանջում են տեղական պէտքերը, եւ ապահովել հայ ազգաբնակչութիւնը քրդերի ու չէրքէզների դէմ: Նա պարբերաբար կը հաղորդէ այդ ուղղութեամբ արած իր քայլերը պետութիւններին, որոնք կը հսկեն նրանց գործադրութեան վրայ»:

«Յօդուածը ասում է՝ «պարբերաբար» և այն 1878 թիւն: Իսկ ի՞նչ է տեղի ունեցել այդ թւից իվեր Թըքահայաստանում — դա ձեզ յայտնի է, դրա մասին ձեզ ասւած է նոյն այս յարկի տակ: Մի քանի անգամ զանազան պետութիւններ հրաւիրել են Թիւրքիային կատարել իր խոստումները, բայց ապարդիւն. բարեփոխելու տեղ, դրութիւնը աւելի ևս վատացաւ: Տեղի ունեցան կոտորածներ, որոնց նմանը չէ տեսել մարդկային պատմութիւնը: Անխիղճ ղեկավար չէ տեսել մարդկային պատմութիւնը: Անխիղճ ղեկավարները դրոմաժը և անգութ հրոսակների ձեռքով կոտորեց ներքին զոհարարի ահագին մասը և այն էլ այնպիսի մի ամբողջ ժողովրդի ահագին մասը և այն էլ այնպիսի պայմաններում, որ Եւրոպայի ամենաանզգայ սրտերն անգամ զգացեցին և ասացին. «անկարելի է այլևս թողնալ տալ այսպէս շարունակել»: Դեռ կոտորածների սկզբում, սուլթանը տւած էր իր պատի խօսքը Սօլթիւրիին, թէ շուտով իրագործելու են բարենորոգումները, որով անհնարին կը դառնար նոյնանման երևոյթների կրկնութիւնը: Բարենորոգումները չ'իրագործեցին. վայրագութիւնները վերսկսեցին և շարունակեցին աւելի քստմեղի,

աւելի վայրագ կերպով մինչև որ հայ ժողովուրդը արևնաթաթախ տապալեց, անընդունակ շարժելու, զոհուելով Եւրոպայի անտարբերութեան, զոհուելով վայրագ պաշտօնեաների և սուլթանի Փանատիկոսութեան ներկայացուցիչներին...

«Այն դէպքերը, որ ես յիշեցնում եմ ձեզ—շարունակեց հետո—հետևում են, անկասկած, որոշ չափով Թիւրքիայի թուլութիւնից: Վերջինս մենակ և իր կամքով անկարող է իրագործել այնպիսի փոփոխութիւններ, որ տնչում են այս ժողովուրդները, որոնք անհրաժեշտ են սրանց առաջադիմութեան համար, որպէս զի իր բնական յատկութիւններով այս դրախտանման երկիրը—որ ժամանակին ունեցել է բարձր քաղաքակրթութիւն—կարողանար դուրս գալ ներկայ պայմաններից, դադարել լինել անապատ, ուր կեանքը դարձած է մի դժոխք: Պարոններ, ժամանակ է ձեռնարկել Հայաստանում ունեւորը գործի, հարկաւոր է իրագործել այն բարենորոգումները, որ առաջարկած են սուլթանին մեծ պետութիւնների ներկայացուցիչները և որ սուլթանը ընդունած է սկզբունքով: Սակայն, սուլթանի «սկզբունքով» ընդունելը արժէք չունի, դա նշանակում է, որ իրերի գրութիւնը կը մնայ անփոփոխ, մինչև որ բարեփոխութեան իրագործումը չհրամայի Թիւրքիային, դրսից:

«Մեզ կարող են առարկել, Հայաստանում ներկայումս իշխում է խաղաղութիւն, ի՞նչ հարկ կայ վրդովելու այդ խաղաղութիւնը: Մենք ևս ցանկանում ենք պահպանել խաղաղութիւնը, մենք ևս հակառակ ենք բարդութիւնների: Եթէ իսկապէս երկրում տիրէր խաղաղութիւն և անդորրութիւն, մենք ևս չէինք կամենայ առաջ բերել բարդութիւններ, որոնք յարուցանում են պետութիւնների մէջ մրցում: Սակայն ասելով՝ քանի որ տիրում է խաղաղութիւն, հարկ չկայ ունեւ բարենորոգման, գուր ստիպում էք նրանց, որոնք այսօր ենթակայ են ճնշման, բայց մնում են հանգիստ՝ մտածել խոռովութիւնների մասին, որպէս զի հարկադրւած լինիք զբաղել իրենցով: Եւ մի կարծէք, որ եթէ այսօր տեղի չունեն Հայաստանում կոտորածներ մեծ չափով, էլ այնտեղ չեն սպանում, չեն այրում, ժողովուրդը այնտեղ տանջում է աւելի քան տանջել է երբեք: Նա շատ թոյլ է այսօր իրեն պաշտպանելու համար, շատ թոյլ է ունեւ շարժում՝ առաջ բերելու համար: Թիւրքիան շահ չունի այսօր նորոգելու իր գազանութիւնները մեծ չափով, դա կարող էր լուրջ կերպով գրաւել Եւրոպայի ուշադրութիւնը և վերջինս իր ձեռքը կ'առնէր խնդիրը ու—քանի որ ինքը Թիւրքիան իր նախաձեռնութեամբ չի մտցնում ոչ մի բարեփոխութիւն—կը հաստատէր մի յանձնաժողով, մի վարչութիւն, որը ստիպողաբար կ'իրագործէր այն բարեփոխութիւնները, որոնք խոստացած են հազար անգամ, համարւած են անհրաժեշտ Եւրոպայի ներկայացուցիչների կողմից, բայց մինչև օրս չեն իրագործւած:

«Ոչ մի հայ այսօր չի մտածում անջատել Հայաստանը Թիւրքիայից: Ինչ երազներ էլ ունենան հայերը հետու ապագայի նկատմամբ, նրանք բոլորը լաւ գիտեն, որ դեռ շատ երկար տարիների ընթացքում չպէտք է մտածեն անկախ Հայաստանի մասին: Մի այսպիսի երազ վեր է բոլորովին նրանց կարողութիւնից, նոյնիսկ այն կուսակցութեան կարողութիւնից, որ կրում է յեղափոխական կուսակցութեան անունը...

«Հայերը չեն ձգտում ուսմկալարական կարգերի, ուր ամէն գիւղի ներկայացուցիչներ մասնակցէին, գա-

ւառական ժողովում, այլ շատ աւելի համեստ բարեփոխութիւնների, որ—նորից շեշտում եմ—մշակւած են պետութիւնների ներկայացուցիչների կողմից: Այս ծրագիրն է, որ ցանկանում և պահանջում է իրագործել հայ ժողովուրդը: Եթէ կայ յարմար ժամանակ պահանջելու Թիւրքիայից իրագործել լրջօրէն այս բարենորոգումները, դա խաղաղութեան ժամանակն է, երբ չկայ յեղափոխութիւն: Եթէ այդ ժամանակը փախցնել, ապագայում, որ հետո չէ, առաջ կը գան այնպիսի երևոյթներ, որոնք կը յարուցանեն Եւրոպայի զայրոյթը, դարձանքը և նոյնքը: Սա գիւրդն է մանաւանդ այն պատճառով, որ Բեյրութի դաշնագրութիւնը ստորագրող երկու հզօր պետութիւններ—Անգլիան և Ֆրանսիան—պատրաստ են պաշտպանելու այս տեսակ բարեփոխութիւններ: Յայտնի է, որ այդ պետութիւնները մի քանի անգամ նախագուշացրած են միւս պետութիւններին, հրաւիրելով ձեռնարկել այսպիսի մի քայլ: Ակնհեր է, թէ ինչն է հանդիսանում սրա արգելքը: Մէկը գալիս է Ռուսաստանի կողմից, որը գուցէ շահ ունի, որ Հայաստանում չհաստատուի խաղաղութիւն, միւսը՝ գերմանական պետութեան կողմից: Ինձ համար բոլորովին անհասկանալի է, որ Հայաստանում Գերմանիան շահ ունի դիմագրելու այն բանին, ինչ որ ժամանակին գերմանացի քաղաքագէտները համարած են անհրաժեշտ: Գերմանիան շահ ունի Թիւրքիայի հետ հաշտ ապրելու, բայց որ կարելի է հաշտ լինել Թիւրքիայի հետ, յայտարարելով նրան բարեփոխութիւնների անհրաժեշտութիւնը, դրան ապացոյց Ֆրանսիան և Անգլիան, որոնք առանց վնասի իրենց շահերի՝ հսկում են թիւրք պաշտօնեաների վրայ և անցեալ տարի պատիւ ունեցան նոյնիսկ առաջն առնել պատրաստւած գազանութիւնների»...

**Մ Ա Մ Ո Ւ Լ Ի Տ Ե Ս Ո Ւ Թ Ի Ի Ն**

\* \* \*

Ահա այն ճառի համառօտութիւնը, զոր Ա Ն ա տ օ Լ Ք ր ա ն ս կարդաց «Հանրապետական ընկերութեան» կողմէն Հայաստանի և Մակեդոնիայի օգտին կազմակերպւած ժողովին.

Քաղաքացիներ,  
Կարմիր սուլթանի նրամանով ինկան 300 հազար հայեր: Անաէր ժողովուրդ մը կապրի սուրի տակ՝ Տօրոսի գողաթններուն եւ Արարատի սարահարթի միջև:

Մակեդոնիոյ մէջ, որ քանի մը ժամ միայն նուրի է Բուտափիւտէն եւ Վիեննայէն, թիւրք զինուորներ եւ պաշտօնեաներ կոտորելին զուգայնեցրը, բռնաբարելով անոնց աղջիկներ և կիներ: Այս ոճիրները, որ կատարուցան յամօթ Եւրոպային, Եւրոպան պարտաւոր է արգիլել զայն: Մարդկութիւնը այդ պարտաւորութիւն կը գնանոր մրայ, իսկ Պերլինի դաշնադրութիւնը սնոր կուտայ զրական իրաւունք:

Փրանսան զրկեց իր զրանաւորները թնդանօթներու բերանով պահանջելու Լօրանոյց և թիւրքի պարտքը: միթէ՞ մեր զրահաւորները զրւած են միայն Լօրանոյցի և թիւրքի ծառայութեան տակ:

Սուլթան մասնելով Հայաստանը և Մակեդոնիան խեղդիչներու ձեռքը, ինքը պետութիւններու կողմէն չ'ենթարկուցեալ ոչ մի պահանջքի: Գերմանիան, Անգլիան և Ֆրանսան, անոր ինստակալները, կ'ըսեն անոր ուրեմի՝ «կարող ես սպաննել, միայն թէ վճարէ»:

Ինչպէս կը կարծեն ճարտիկները՝ երկու անտակ քաղաքականութիւն կայ. մէկը՝ խոնկուութեան քաղաքա-

կանութիւնը, միւսը մեր սեփականը: Մենք կը պատասխանենք, որ ոճրագործութեան հանդէպ կայ միայն մէկ քաղաքականութիւն — մարդկայնութեան քաղաքականութիւնը:

Կը պնդենք, որ մենք չունինք վերապահութիւն եւ զգուշութիւն. ո՛չ նախատեսելով այն ջարդերը, որ քանի մը օրէն արիւնով պիտի ողողեն Մակեդոնիան եւ աղաղակելով, որ թիւրքի տապարը կը բարձրանայ միշտ Հայաստանի վրայ — մենք չենք նակտակիր ոչ զգուշութեան եւ ոչ իմաստութեան: Զգուշութիւնը չի նշանակեր լռել եւ ժխտել կոտորածները. խոնամութիւնը չի նշանակեր թողատրել ոճիրը անարգ լռութեամբ մը: Ստորնութիւնը երբէք իմաստութիւն չէ: Ո՛րն է ուրեմն այս լռելու իմաստութիւնը, երբ զո՛նի արիւնը կ'աղաղակէ: Միմիայն մեր քաղաքականութիւնն է իմաստուն, որ յայտնի եւ նամարձակ է: Եւ արդարութեան ձայներէն դուրս կան միայն անակնկալներ եւ վտանգներ:

Միմիայն մեր քաղաքականութիւնն է խաղաղական, որովհետեւ նա հիմնուած է քաղաքակիրթ ազգերու մտղովորական զգացմունքներու վրայ եւ որովհետեւ ամէն տեղ ժողովուրդը կը գարչէ պատերազմէն:

Քաղաքացիներ,

Մենք կը հետաքրքրուինք ձայնդ եւ մակեդոնացոյ ճակատագրով, ոչ թէ անոր նամար որ անոնք քրիստոնէայ են, այլ որ մարդ են: Մենք կը պահանջենք իբրեւ երաշխաւորութիւն անոնց փրկութեան եւ միանգամայն ամրապնդելու նամար նախախաբարայն խաղաղութիւնը լիակատար եւ ամբողջական գործադրութիւն: Պերլինի դաշնադրութեան Հայաստանի եւ Մակեդոնիայի վերաբերմամբ:»

**Ն Ի Ի Ր Ա Տ Ի Ո Ի Թ Ի Ի Ն**

**ԱՐԵՒԱՏԵԱՆ ՔԻՒՐՈՆ ստացած է՝**

ԹԻՎԱՆՈՒՄ՝ սեպտեմբեր ամսին, Տիգրանի միջոցով (Պրո Արմենիայի՝ նամար) 305 Ֆրանք:

ՍՈՒՆՆԱՅԻ (Ռուսմանիս) «Գրանուր» Ենթակալիտէից 500 Ֆր.: Եւրոպայի Ռուսման. Միութիւնից (նայ քաղաքական քանտարկեալների օգտին) 200 Ֆրանք:

ԳԱՆՎՈՐՈՒՄ (ի նպատակ նայ քանտարկեալների) Բերկուրնի եւ Միլայէի Միտքեանների կազմակերպած միմակահանութեան զուտ արդիւնք (2365 դրանկան) 610 Ֆրանք:

ՏՐԱՆՍԿԱՆԻ ԻՍՏԱՆԵՆԵՐՈՐԳ քաղաքից Մ. Մ-ից 24. Ֆր. 60 ս.: Ընդհանուր զուտար 1639 ուրքի 60 սանտիմ:

**Գ. Յ. ԳԱՇՆԱԿ. II (ՁՐԱՐ.-ի) Կ. ԿՕՒՄԷՆ՝**

№ 10 տետրով (1902 օգոստ. 9-ից մինչև 1903 յունվ. 1).

474	Եփրատ գ-ի ենթակալիտէից ապրիլ-մայիս 18 ուրքի,
475	Եփրատ գ-ի ենթակալիտէից ապրիլ-մայիս 18 ուրքի, համաձայն 72 ուրքի,
476	Կարին գ-ից նանգանակած 25 ուրքի,
477	Ջրաբերդի Արշալոյս խմբից 5 ուրքի,
478	Պարտիզաւանցի Մ. Մ-ից նւեր 50 ուրքի,
479	Արեւակալ խմբից 3 ուրքի,
480	Մ. Բ-ից նւեր Ջրաբերդում նանգանակած 100 ուրքի,
481	Մ-ից նւեր " " " " 100 ուրքի,
482	Մ. Մ-ից նւեր " " " " 100 ուրքի,
483	Սէյլ-ից նւեր " " " " 50 ուրքի,
484	Մ. Բշնից նւեր " " " " 50 ուրքի,
485	Մ. Մ-ից նւեր " " " " 30 ուրքի,
486	Սոք. Կ-ից նւեր " " " " 30 ուրքի,
487	Մ. Թ-ից նւեր " " " " 25 ուրքի,
488	Սոք. Մ-ից նւեր " " " " 20 ուրքի,
489	Ա-սլանից նւեր " " " " 20 ուրքի,
490	Սոք. Բ-ից նւեր " " " " 30 ուրքի,
491	Մ. Պ-ից նւեր " " " " 25 ուրքի,
492	Տ. Մ-ից նւեր " " " " 20 ուրքի,
493	Փ-Չից նւեր " " " " 20 ուրքի,
494	Մ. Ա-ից նւեր " " " " 10 ուրքի,
495	Սոք. Դ-ից նւեր " " " " 8 ուրքի,
496	Զ. Վ-ից նւեր " " " " 5 ուրքի,

497	Գ. Ա-ից նւեր Ջրաբերդում նանգանակած 10 ուրքի,
498	Յ. Փ-ից նւեր " " " " 5 ուրքի,
499	Գ. Մ-ից նւեր " " " " 5 ուրքի,
500	Սոք. Դ-ից նւեր " " " " 10 ուրքի,

**№ 20 տետրով.**

501	Ա. եւ Կ. Է-ից նւեր Ջրաբերդում նանգանակած 20 ուրքի,
502	Ար. Վարդանեանից " " " " 10 ուրքի,
503	Կապի-ից նւեր " " " " 10 ուրքի,
504	Ն. Կ-ից նւեր " " " " 10 ուրքի,
505	Ս. Վ-ից նւեր " " " " 10 ուրքի,
506	Մ. Զ-ից նւեր " " " " 3 ուրքի,
507	Մ. Ստ-ից նւեր " " " " 3 ուրքի,
508	Մ. Մ-ից նւեր " " " " 5 ուրքի,
509	Յ. Ս-ից նւեր " " " " 10 ուրքի,
510	Ս. Ք-ից նւեր " " " " 50 ուրքի,
511	Այլալոյս գիւղից " " " " 25 ուրքի,
512	Յ. եւ Ֆ-ի կազմ. Երեւոյթից " " " " 55 ուրքի,
513	Եփրատ գ-ից Բողոքից 23 ուրքի 27 կօպէկ,
514	Եփրատ գ-ից նանգանակած 29 ուրքի 5 կօպէկ,
515	Ստեփան գիւղի տ. Կ-ից ցլեքը յունվ. 1903 22 ուրքի 20 կօպէկ,
516	Ջրաբերդի Արշալոյս խմբի տւած Երեւոյթից 40 ուրքի,
517	Ա-ի կազմ. Երեւոյթից Ջրաբերդում 31 ուրքի 50 կօպէկ,
518	Կ-եանցի, Ֆ-ի եւ Դ-եանցի կազմ. Երեւոյթից 55 ուրքի 22 կօպէկ,
519	Ջրաբերդի Ժողովի պատանի գիւ. Կ-ից սեպտ. ամ. 4 ուրքի 22 կօպէկ,
520	Ջրաբերդ գիւղի Զին. խմբից 3 ուրքի 20 կօպէկ,
521	Գ. Բ-ի տան նշանադրութեան ժմակ. նանգանակ. 10 ուրքի,
522	Ճամբորդում Մարշոյից եւ իր կնոջից մարտ-դեպտ. 29 ուրքի,
523	Փայլունում ուխտի ժամանակ նրաճիշտներից 1 ուրքի 65 կօպէկ,
524	Մլնամ գիւղում նանգանակած 44 ուրքի,
525	Բլբուլ գիւղում նանգանակած 43 ուրքի 25 կօպէկ,
526	Փայլուն գիւղում նանգանակած 52 ուրքի,
527	Ն. Ստանից 5 ուրքի,
528	Փայլունում Երեւոյթից նւեր 6 ուրքի,
529	Նախընթացի նանգանակութիւն 22 ուրքի 27 կօպէկ,
530	Շաւարշան խմբից նւեր 7 ուրքի,
531	Մի խումբ գիւղերիցից սպայ Ա. Լ-ի միջոցով 2. 30 կօպէկ,
532	Առակ գիւղի ենթակալիտէի միջոցով նանգանակ. 23 ուրքի,
533	Ջրաբերդի Քարմ խմբից 5 ուրքի 5 կօպէկ,
534	Սպիտակ Դոշի տեղ. կօմիտէից 6 ուրքի,
535	Սպիտակ Դոշի տեղ. կօմիտէից ամսալծ. 19 ուրքի 60 կօպէկ,
536	Ջրաբերդի Յոյս խմբից 10 ուրքի,
537	Ջրաբերդի Արմենիա խմբից 4 ուրքի 50 կօպէկ,
538	Նախընթաց խմբից ամսալծ. ցնկտ. 21 ուրքի 10 կօպէկ,
539	Կիլիկիայ գիւղից նւեր 6 ուրքի,
540	Դ. Բ-եանցի նւեր 10 ուրքի,
541	Ղարաբաղից նւեր 22 ուրքի 16 կօպէկ,
542	Տիգրանից նւեր 15 ուրքի 26 կօպէկ,
543	Բագրանից մի ուրքի 2 ուրքի 95 կօպէկ,
544	Մ-նի վանքից նւեր 2 ուրքի 78 կօպէկ,
545	Ա. Զ-ից 50 ուրքի,
546	Պետրոսից նւեր 6 ուրքի,
547	Կարապետից նւեր 4 ուրքի,
548	Արեւ գիւղի նանգանակութիւն 24 ուրքի 50 կօպէկ,
549	Ջրաբերդի Գուրգանից նւեր ամսալծ. 11 ուրքի 30 կօպէկ,
1000	Ջրաբերդի Սեբոք-Աղբեր խմբի ամսալծար 3 ուրքի,
1001	Եփրատ գիւղի ամսակալներից նաշին 25 ուրքի,
1002	Ջրաբերդում Թ-ը-եանի նաշան. նանգ. 11 ուրքի 25 կօպէկ,
1003	Նոր-Եփրատ պատանի խմբի նոյն. ամս. 6 ուրքի,
1004	Ջրաբերդի Կարիճ խմբի նոյն. ոտնիկը 3 ուրքի,
1005	Բլբուլ գ-ի ամսալծարներ 40 ուրքի,
1006	Բլբուլի կանանցից նւեր 2 ուրքի 23 կօպէկ,
1007	Կարին գիւղի նանգանակութիւն 13 ուրքի 80 կօպէկ,
1008	Մի խումբ գիւղերիցից սպայ Ա. Լ-ի միջոցով 2 ուրքի 65 կօպէկ,
1009	Ջրաբերդի Մուրատ խմբի նոյն. ոտնիկը 2 ուրքի 50 կօպէկ,
1010	Վտակ գ-ի Տ-ից տուգանք 10 ուրքի,
1011	Վտակ գիւղի ամսալծարներ 12 ուրքի,
1012	Նորակից գիւղի նանգանակութիւն 22 ուրքի,
1013	Վարդապետից յունարի ամսալծար 5 ուրքի 35 կօպէկ,
1014	Եփրատ գիւղի ամսալծարներ 29 ուրքի 20 կօպէկ,
1015	Եփրատի նորաբողոք խմբի սեպտ. եւ 20 ամսալծ. 8 ուրքի,
1016	Ա. Է-ի տանի առթիւ նւեր Ա. ամրոց խմբից 25 ուրքի,
1017	Ջրաբերդում Բիւնուի նաշանից. նանգ. 4 ուրքի 20 կօպէկ,
1018	Մլ-տր գիւղից նւեր 8 ուրքի,
1019	Ամասանցի ծեր 10 ուրքի,
1020	Կիլիկիայի ցնկտեմբերի վերջի ամսալծ. 54 ուրքի 94 կօպէկ,
1021	Յ. Էջնիցի տանի առթիւ նանգանակած 4 ուրքի 20 կօպէկ,
1022	Նորակալ Նորա ծերի խմբի միջոցով 3 ուրքի 20 կօպէկ,

- 1023 Սարգսար գիւղի հանգանակութիւն 245 ուրբի,
- 1024 Երազաւոր գիւղի զանազան խմբերից եւ հանգանակութիւն 34 ուրբի 61 հօպէկ,
- 1025 Ընդարձակ անձուէր խմբից նւէր 5 ուրբի,
- 1026 Ե-ից եւ Ես-ից տուգանք 20 ուրբի,
- 1027 Հ. Սարգսարից Սեւազքիւր գ. 15 ուրբի,
- 1028 Մ. Գ-եանի եւ Ա. Գ-եանի հարս. հանգ. 9 ու. 31 կ.,
- 1029 Գ. Տ. Աղ-եանցի դստեր նշանադր. նւէր հանգ. 8 ու. 15 կ.: Ընդհանուր զոււար 2583 ուրբի 13 հօպէկ:

**ՊԱԿԱՆՆԵԱՆ Առժամանակեայ Կեդր. Կօմիտէն՝**

ՍԼԻՎԷՆԻ Կօմիտէն 225 լէվ 15 սանտիմ՝ հանգանակած հետեւեալ կերպով՝ Սուրաք Վաղարայի հայ եւ պուլխարներէ հուսարած, զանձանակի հասոյթ (1902 յունվ. 27) 19 լէվ եօթ եւ կէս սանթիմ, Գէրմէնի Կայարանի Անդրանիկ խմբի անդամաւձարներէ (1902 մարտ 23) 15 լէվ, Արարձա Կայարանի Սերոբ Աղբիւր խմբի անդամաւձարներէ (1902 ապրիլ 3) 74 լէվ, Սիւվէնի Վասպուրական նորակազմ խմբի անդամաւձարներէ (1903 յունվ. փետրվ. 28 լէվ 14 սանտ., Գէրմէնի Կայարանի Անդրանիկ խմբի անդամաւձարներէ (1903 փետր. 20) 44 լէվ, նւէր Օժանդակ Կօմիտէի անդամ Թոհաֆեանէ (1903 փետրվ. 32) 20 լէվ, Արարձա Կայարանի Սերոբ Աղբիւր խմբի անդամաւձարներէ (1903 փետրվ. 26) 54 լէվ 80 սանտիմ:

**ԱՏՐՊԱՏԱԿԱՆ Կեդր. Կօմիտէն՝**

ԵԱՆՐՈՒԹԻՑ՝ Եասէն 50 դրան, Պետրոս 100, Մարգար 20, Ն. Սիւնեցի 30, Բաւքալ 105, Վէլպայ 40, Վրոն 25, Ալու 50, Գրիգորիչ 60, Նիկալայ 50, Միհրան 25, Ն. Սիւնեցի 25, Վարժապետ 20, Մահ Մատնիշին 25, Հաւատ-յոյս-ւէր 3, Սիւնեցի 40, Սըրց 30, Աղասի 25, Սէր դէպի հայնենից 10, Ուն 10, Փանահ-խան 20, Ուն 10, Վահան 50, Գահստան 10, Երկաթ 10, 4 եղբայրք 15 դրան: Գումար 808 դրան:

ՍԱՔՅԻԱՐԻՑ՝ Սիւնեցի 25 դրան, Ապրո Տ-եան 20, Զօկ 20, Աղասի հայ բաշ 20, Ալահվերտից 5, Բաղար հայոց 20, Գրիգորեան 10, Բազէ Հայաստանի (Պանդուխտ) 20, Խոն Գասկեղոց 10, Սրինգ 10, Արցախ 20, Արցունի պանդուխտ 20: Գումար 200 դր.: Ընդհանուր զոււար 1008 դրան:

**ԱՍԵՐԻԿԱՅԻ Կեդր. Կօմիտէն՝**

ՆԵՇՈՒՆԻ Կօմիտէն 1901 թ.ին. Յարութիւն Կարապետեան 28 դոլար, Պետրոս Կօստանիան 20 դոլար, Գարեգին Միրզայեան 15, Կերոբ Պարսամիան 13, Միսազ Յովակիմեան 13, Համբարձում Տէրտէրեան 15, Խաչատուր Եղիկեան 15, Միքայէլ Պազայեան 10, Արմենակ Պեղերձեան 2.50, Պօղոս Կօստանիան 1, Կարապետ Յարութիւնեան 5, Կարապետ Աօզէրեան 5, Հարար Կէօկերեան 3, Նշան Կէօկերեան 2, Եղիկ Թաղէտեան 2, Գրիգոր Մաթոյեան 2, տիկին Յովսէփեան, Մարտուկ Փափագեան, Միսազ Պասմաձեան, 0 0, Կարապետ Կօստանիան, Եղբայրք Գազանձեան 1-ական, Ասատուր Տ. Մօսոյեան 2, Յովհաննէս Պորձակեան 50 սէնտ, Գեւորգ Տէրտէրեան 50 սէնտ, Ստեփան Փափագեան 25 սէնտ, Պասկենտէր գոյացած 10.28 դոլար: Գումար 171 դոլար 3 սէնտ:

ՆԵՇՈՒՆԻ Կօմիտէն 1902 թ.ին. Յարութիւն Կարապետեան 106 դոլար, Միսազ Յովակիմեան 36, Պետրոս Կօստանիան 36, Գրիգոր Մաթոյեան 36, Կարապետ Պոյաճեան 34, Եղիկ Մ. Թաղէտեան 32, Նշան Կէսկէրեան 27, Կարապետ Յարութիւնեան 25, Յովհաննէս Տէր Գեորգեան 24.50, Կերոբ Պարսամիան 23, Մարտուկ Փափագեան 22, Արամ Եամլեան 20, Յովհաննէս Մուրեան 20, Հայկ Գազանձեան 17, Գարեգին Միրզայեան 16, Համբ. Տէրտէրեան 16, Թորոս Տօղորեան 15, Արամ Ոսկերչեան 14, Ասատ. Տ. Մօսոյեան 13, Յարութ. Դազարեան 12.50, Պաղտասար Պարսամիան 12, ... Խըլյախ ... 11.50, Գրիգոր Տ. Գէորգեան 13, Միքայէլ Պազայեան 8.50, Վարդօ Մ. Ինձեան 8.50, տիկին Կէօկերեան 6, Արմենակ Պեղերձեան 6, Արշակ Մակարեան 6, Օսկիան Տ. Կարապետեան, Տիգրան Յովակիմեան, Տիգրան Եամլեան, Ուն, Առաքել Պեղերձեան, Պարսամ Դալիթեան, Գասպար Միսասեան, Գրիգոր Տիգրատուրեան, Ե-ական, Ուն 3, Ռ. Գ., Հարար Գէօկերեան, Աւետիս Մ. Պոյաճեան, Գարբիէ Առաքելեան, Տօնապետ Աօզէրեան, Խոյաճան Նաճարեան, Ասատուր Կարապետեան, Ասատուր Իսարոնեան, Յովնազան Տեփոյեան, Սարգիս Մ. Յակոբեան 2-ական, Գրիգոր Տահրագեան, Պետրոս Մուռեան, Տօնապետ Կօկուրեան, Տիկին Ս. Նաճարեան, Տիկին Մ. Գեորգեան, Տիկին մը, Սողոմոն Յակոբեան, Ուն, Ուն 1-ական, Խոյճաբէ մը 24.1, Համակիճներու ժողովէն 17.25, Ընկերական ժողովի անակներէն 14.13, 1901 թ.ի հաշիւի մնացած 4.9 դոլար: Գումար 747 դոլար 98 սէնտ:

**ՌՈՒՄԱՆԻԱ**

ԴԱՆՈՒԲ Ենթակօմիտէն (1902 հոկտ. նոյեմբ. եւ դեկտեմբ.) ՊՐԱՒԵԱՅԻ Առիւծ խմբ. 40 ֆրանք, ՍՈՒՂԻՆԱՅԻ Տարծն խմբ. 11,

Սերոբ-Աղբիւր խմբ. 39, Նոր-Դար խմբ. 33, Ջինասէր խմբ. 30, Կարին խմբ. 24, Վարազ խմբ. 30, Տրդատ խմբ. 20, Հազու խմբ. 36, Փէդայի խմբ. 30.30, Սեհպու խմբ. 13.60: Գումար 306 ֆրանք 90 սանտիմ:

ՌՕՍԹԱՆՅԱՅԻ Ենթակօմիտէն (1902 յունւարէն-սեպտեմբ.) Դեւեան խմբ. 37 ֆրանք, Հորս Գանձ խմբ. 41.50, Դեւոնդեան խմբ. 59.50, Ազարդ խմբ. 37, Ժաղիր խմբ. 30, համակրողներէ՝ Տ. Լ. 10 ֆրանք, Մէճիտէէ զիւղաբարդք 3, Ուն 2, Առիւծ 4, Բաքէն 4, Մ. Ս. Բ. 4, Պալթայ 8, Գ. Ս. 5, Տ. Թ. 5, Յարութիւն 1 7.50 ֆրանք: Գումար 257 ֆր. 50 սանտիմ:

1902 սեպտ. 15-է մինչեւ դեկտ. վերջը՝ Դեւեան խմբ. 39 ֆրանք, Ազարդ խմբ. 54, Հորս Գանձ խմբ. 23.50, Դեւոնդեան խմբ. 23.25, Ժաղիր խմբ. 44, համակրողներէ՝ Մ. Ս. Բ. 6 ֆր., Հատիկ 10, Գ. Բ. 3, Ասլան 10, Առիւծ 10, Արամ Խո. 3, Վարդ 10, Սուրեանց 6, Երկաթ 10, Պ. Յ. 3, Փրկիմ 10, Յ. Թ. 2: Գումար 266 ֆրանք 75 սանտիմ:

Ընդհանուր զոււար 831 ֆրանք 15 սանտիմ:

**ԾՈՎԱՓԻ Կեդր. Կօմիտէն՝**

Մաս մը բան 108 դահեկան, Կարուշ (1902 յունվ.-էն դեկտ.) 60, Մարդասէր (1902 յունվ.-էն դեկտ.) 120, Արեւ 20, Լուսին 20, Աստղ 20, Փայլակ 20, Արծիւ 20, Բարեկէն 20: Գումար 408 դահեկան:

**ՊԱՐՍԱՏԱՆ**

ԳՆՏԱՓԻ Կօմիտէն Վահանու միջոցով Յոյս խմբ. անդամաւձար, վիճակախառ, հանգանակութիւն 190 դրան, Մի զիւղացի 10, Պ. Ներսէս 20, տիկ. Մարթա 10: Գումար 230 դրան (100 ֆր.):

**ՎԻՃԱՊԻ Կեդր. Կօմիտէն՝**

«Թաթու քայլ» 10 դահեկան, Ամատունի 95 դահեկան:

**Պ Ա Ճ Տ Օ Ն Ա Կ Ա Ն Յ Ա Յ Տ Ա Ր Ա Ր Ո Ւ Թ Ի Ն**

Յայտարարում ենք ի գիտութիւն Հայ Յեղափոխական Դաշնակցութեան Բիւրօներէ, բոլոր Կենտ. Կօմիտէներէ, Կօմիտէներէ, խմբերի եւ համակրող անհատներէ.

- 1) Առանց նախապէս Կենտ. Կօմիտէիս գիտութեան եւ համաձայնութեան՝ ոչ մի անհատ չգայ մեր շրջանը, ուէ յեղափոխական յանձնարարութեամբ:
  - 2) Երկիր անցնելու համար հարկաւոր է նախապէս ստացած լինել երկրի ընկերներէ համաձայնութիւնը. ապա այդ մասին նախապէս պիտի տեղեկութիւն տրւի մեզ թէ ուղարկող մարմիններէ կողմից եւ թէ այն տեղերի կողմից, ուր ձանապարհուում են այդ անհատները:
  - 3) Բոլոր նրանք, որոնց այս պայմանները կատարելուց յետոյ դալիս են մեր շրջանը, պիտի ունենան պաշտօնական յանձնարարականներ:
  - 4) Այս պայմանները չկատարուած դէպքում Կենտ. Կօմիտէս եկած անձը չի ձանաչի եւ նրան չի աջակցի:
- Լ. Յ. Դ. ԱՏՐՊԱՏԱԿԱՆ Կ ԿՕՄԻՏԷ

**Վ Ե Ր Զ Ի Ն Տ Ե Ղ Ե Կ Ո Ւ Թ Ի Ն**

Մեզ հեռագրում են պարսկա-թրքական սահմանազնից.

«Վանում խուզարկութիւններ, ձերբակալութիւններ, Ընդհարում զօրքի եւ հայ յեղափոխականներէ միջև: Երկու կողմից սպանուածներ ու վիրաւորուածներ: Մանրամասնութիւնները նամակով»:

Խմբագրութեան գիմել հետեւեալ հասցեով՝  
 Rédaction du „Droschak“, Genève (Suisse)